

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

(Որակավորման հարցում)

**Կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի
տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր
գործընկերության ծրագրի մասնավոր գործընկերոջ
ընտրության**

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն Որակավորման Հարցումը հրապարակվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության («**Իրավասու մարմին**») կողմից՝ կապված Ծրագրի Ընտրության գործընթացի հետ (ինչպես հետայսու նկարագրված է սույն փաստաթղթում): Այս փաստաթուղթը նախատեսված է բացառապես Ընտրության Գործընթացի Հայտատուների համար՝ Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն Որակավորման Հարցումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության («**Կիրառելի Օրենք**») համաձայն և Կառավարության, Իրավասու Մարմնի [և Ծրագրի մշակման գործընթացում Կառավարության կողմից ներգրավված այլ գերատեսչությունների և միավորների] տեղեկատվության և փատաթղթերի հիման վրա:

Սույն Որակավորման Հարցումը սահմանում է, ի լրումն այլ հարցերի, Որակավորման Հայտերի ձևական և բովանդակային պահանջները, Որակավորման Հայտերի ներկայացման և դիտարկման ընթացակարգը, ինչպես նաև՝ մրցութային գործընթացին մասնակցության թույլտվության որակավորման չափորոշիչներն ու պայմաններն Առաջարկի Հրավերի հիման վրա, ինչպես որ պահանջում է Կիրառելի Օրենքը:

Սույն Որակավորման Հարցումը նպատակ չունի սահմանել տեղեկատվության և փաստաթղթերի սպառիչ ցանկ, որը կարող է պահանջվել Ընտրության Ընթացակարգին մասնակցելու համար: Հայտատուների խորհուրդ է տրվում իրականացնել իրենց վերլուծությունը և հավուր պատշաճի ուսումնասիրությունը Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման նպատակով կամ կայացնել ցանկացած որոշում Ընտրության Ընթացակարգին պատրաստվելու և մասնակցելու վերաբերյալ:

Ո՛չ Կառավարությունը, ո՛չ Ընտրության Ընթացակարգի ապահովման համար նշանակված գնահատող հանձնաժողովը («**Գնահատող Հանձնաժողով**»), ո՛չ նրանց ներկայացուցիչները կամ խորհրդատուները, ո՛չ Հայաստանի Հանրապետության այլ իշխանություններ, նրանց ներկայացուցիչները կամ խորհրդատուները՝

- 1) չեն իրականացրել որևէ անկախ ընթացակարգեր այստեղ ներկայացված որևէ տվյալի հավաստման նպատակով, բացի՝ այն ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստման համար և Ծրագրի իրականացման վերաբերյալ որոշում կայացնելու համար, ինչի արդյունքները (կառավարության կողմից որոշված՝ որպես Ընտրության Ընթացակարգի համար պատշաճ) արտացոլված են սույն որակավորման Հարցման համապատասխան մասերում:
- 2) չեն իրականացրել որևէ երաշխավորումներ կամ ներկայացվածություններ սույն Որակավորման Հարցման մեջ պարունակված տեղեկատվության ճշգրտության և ամբողջականության առնչությամբ:
- 3) չեն կրում որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն որևէ հաղորդակցության, գործողության կամ տեղեկատվության համար, և՛ ակնհայտ, և՛ ենթադրյալ, որոնք ծագում են, պարունակված են կամ սույն Որակավորման Հարցման հետևանք են դրա հրապարակումից հետո:

Որակավորված Հայտատուներին հայտերի պատրաստման նպատակով տրամադրված տեղեկատվության և փաստաթղթերի որոշակի մասը ենթակա է գաղտնիության պահանջների: Տվյալների փոխանակման և բացահայտման պայմանները պետք է կառավարվեն տեղեկատվության գաղտնիության և չբացահայտման մասին նախաձեռնությամբ («**Գաղտնիության Նախաձեռնություն**»), որն իրականացվում է յուրաքանչյուր Հայտատուի կողմից, որը որակավորվել է և ներգրավվել՝ սույն Որակավորման Հարցման համաձայն հայտերի ներկայացման գործընթացին մասնակցելու համար:

Սույն Որակավորման Հարցումը կարող է հղումներ կամ մեջբերումներ պարունակել որոշակի հայաստանյան օրենքներից, կարգավորումներից կամ պաշտոնական փաստաթղթերից: Ցանկացած նման հղումներ կամ մեջբերումներ չեն ենթադրվում սպառիչ կամ ամբողջական: Հայտատուները պարտավորություն են կրում Ընտրության Ընթացակարգին մասնակցելու նպատակից ելնելով հայաստանյան օրենքների, կարգավորումների և պաշտոնական փաստաթղթերի՝ իրենց անկախ վերլուծությունը կամ ուսումնասիրությունն իրականացնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՆԻՇԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ.....	5
3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.....	10
4. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԲԱՑՈՒՄԸ.....	14
5. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ: ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ.....	18
6. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	22
7. ԱՌԱՋԱՐԿԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈԽԼԻՆ ԱՆՑՈՒՄԸ.....	25
8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	28
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԵՐԻ ՑԱՆԿ.....	31
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ.....	31
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ.....	32
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	33
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ.....	37
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ.....	39
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	43
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ՁԵՎ.....	3
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՎՍՏԱՀԵԼԻ ԲԱՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ.....	8
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	9

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- 1.1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը («**Իրավասու Մարմին**») իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր Հայաստանի Հանրապետությունում նույնականացման փաստաթղթերի թողարկման և բաշխման և նույնականացման փաստաթղթերի տրամադրման կենտրոնների գործարկման ու ապահովման ծառայությունների համար («**Ծրագիր**») արդար և թափանցիկ մրցակցային ընտրության գործընթացի միջոցով հայաստանյան օրենսդրության և միջազգային լավագույն փորձի հիման վրա («**Ընտրության Ընթացակարգ**»):
- 1.2. Ծրագրի առանցքային տարրերի ընդհանուր նկարագրությունը տրվում է սույն Որակավորման Հարցման Հավելված 3-ում (Ծրագրի առանցքային դրույթները): Ծրագրի ՊՄԳ պայմանագրի հիմնական դրույթների նախնական ուրվագիծը, որը պարտադիր չէ և կարող է փոփոխվել, ներկայացվում է Ծրագրի հիմնական պայմաններում, որը հասանելի է Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:
- 1.3. Ծրագրի իրականացման վերաբերյալ Կառավարության որոշման [Որոշման մանրամասները կլրացվեն] համաձայն՝ Ընտրության Ընթացակարգը պետք է իրականացվի որպես երկփուլ բաց ընթացակարգ Կիրառելի Օրենքի շրջանակներում:
- 1.4. Սույն փաստաթուղթը սահմանում է Ընտրության Ընթացակարգի Որակավորման Հարցման փուլին վերաբերող հանգամանքները: Առաջարկի Հրավերի փուլի մանրամասն պայմանները, ներառյալ՝ Հայտերի ձևաչափի և բովանդակության նկատմամբ կիրառելի պահանջները, Հայտերի ներկայացման և գնահատման ընթացակարգերը և մրցութային գործընթացին վերաբերելի այլ տեղեկությունները ներկայացվում են Առաջարկի Հրավերի մեջ, որը նախատեսված է այն Հայտատուների համար, որոնք անցել են որակավորումը համաձայն ՈՀ-ի:
- 1.5. Ընտրության Ընթացակարգը հայտարարվել է համապատասխան լրատվամիջոցներով (ընդհանուր՝ «**Հայտարարություն**»)՝ համաձայն Կիրառելի Օրենքի: Ընտրության Գործընթացում մասնակցությամբ հետաքրքրված բոլոր իրավունակ անձինք հետևաբար հրավիրվում են ներկայացնել Որակավորման Հայտեր սույն ՈՀ-ի պայմաններին համարժեք:
- 1.6. Որակավորման Հարցումը նախապատրաստվել է Կիրառելի Օրենքի համաձայն, ներառյալ՝ Պետություն-մասնավոր գործընկերության մասին Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հունիսի 28-ի ՀՕ-113-Ն օրենքը (փոփոխություններով, «**ՊՄԳ օրենք**»), Կառավարության կողմից հաստատված՝ Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը սահմանելու մասին 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշումը (փոփոխություններով, «**ՊՄԳ ընթացակարգ**»), և հայաստանյան այլ վերաբերելի օրենքներն ու կարգավորումները:
- 1.7. Սույն Որակավորման Հարցման մեջ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, մեծատառերով նշված եզրերը, արտահայտություններն ու հապավումներն ունեն Հավելված 9-ում (**Սահմանումներ և Մեկնաբանություններ**) տրված իմաստը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՆԻՇԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐՁ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2.1. Մասնակից միավորները և նրանց կազմակերպումը

- 2.1.1. Ընտրության Ընթացակարգի նպատակներից ելնելով՝ երկփուլ ընտրության գործընթացի մասնակիցների հիմնական կատեգորիաներն են՝
 - (a) Թեկնածուներ, այսինքն՝ Որակավորման Հայտեր ներկայացրած, սակայն դեռևս սույն ՈՀ-ի պայմանների և պահանջների համաձայն չորակավորված Հայտատուները, և
 - (b) Հայտատուներ, այսինքն՝ հայտատուներ, որոնք ՈՀ-ի պայմանների և պահանջների համաձայն որակավորվել են Առաջարկի Հրավերի փուլում հյատերի ներկայացման համար:

Հայտատուներն ընդհանուր առմամբ Ընտրության Ընթացակարգի բոլոր իրավունակ մասնակիցներն են (և՛ Թեկնածուները, և՛ Հայտատուները, ըստ համատեքստի պահանջի), ինչպես նշվում է ՊՄԳ օրենքում:

2.1.2. Հնարավոր Թեկնածուն կարող է ներկայացնել Որակավորման Հայտ կամ որպես մեկ իրավաբանական անձ, կամ որպես կոնսորցիում՝ կազմված մի քանի իրավաբանական անձանցից, որոնք համաձայնության են եկել մասնակցել Ընտրության Ընթացակարգին («**Կոնսորցիում**»): Մեկ իրավաբանական անձ Թեկնածուները և Կոնսորցիումները կարող են ներառել և՛ ռեզիդենտ, և՛ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց: Տարընկալումները խուսափելու համար՝ Կոնսորցիումն իր բոլոր անդամների հետ պետք է ընկալվի Ընտրության Ընթացակարգում որպես Թեկնածու (ներառյալ՝ որպես Թեկնածու կամ Հայտատու՝ կախված Ընտրության Ընթացակարգի փուլից):

Թեկնածուները կարող են հիմնադրել հատուկ նշանակության ընկերություն Ընտրության Ընթացակարգին միասնական մասնակցության նպատակով, ինչպես նշվում է ստորև՝ Հոդված 2.3-ում:

2.1.3. Կոնսորցիումը պետք է նշանակի և լիազորի իր անդամներից որևէ մեկին՝ ներկայացնելու և անհետադարձելիորեն պարտավորեցնելու Կոնսորցիումի բոլոր անդամներին Ընտրության Ընթացակարգի բոլոր հանգամանքների հետ կապված, ներառյալ, սակայն չսահմանափակվելով Կոնսորցիումի կողմից Որակավորման Հայտի ներկայացումը («**Առաջատար Անդամ**»):

Առաջատար Անդամը պետք է՝

(a) Իրագործի Որակավորման Չափանիշները, որոնք պետք է նաև բավարարվեն Առաջատար Անդամի կողմից առանձին՝ համաձայն *Հավելված 5-ի (Որակավորման Չափանիշներ)*, ինչպես նաև՝ համապատասխանեն սույն ՈՀ-ում հստակորեն մատնանշված այլ պահանջների, և

(b) Առանձին տիրապետի ապագա Ծրագրի Ընկերությունում քվեարկության իրավունքների կամ կապիտալի առնվազն 50%-ը, լինի Ծրագրի Ընկերության խոշորագույն բաժնետերը և պահպանի արդյունավետ վերահսկողություն Ծրագրի Ընկերության տեխնիկական և գործառնական գործունեության նկատմամբ:

2.1.4. Կոնսորցիումը պետք է բաղկացած լինի իրավաբանական անձանցից, որոնք չունեն վերահսկողական հարաբերություններ Առաջատար Անդամի հետ և/կամ իրավաբանական անձինք, որոնք որակավորված են որպես Առաջատար Անդամի հետ Առնչվող Ընկերություններ: Կոնսորցիումի բոլոր նման իրավաբանական անձինք, ներառյալ՝ Առաջատար Անդամը, սույն Որակավորման Հարցման շրջանակներում պետք է ընկալվի որպես Կոնսորցիումի Անդամ:

2.2. Մասնակցության առանցքային պահանջներ և հավաստումներ

2.2.1. Թեկնածուները պետք է համապատասխանեն (և պետք է երաշխավորեն այլ Կոնսորցիումի Անդամների համապատասխանությունը նման դեպքի առկայության պարագայում) Թեկնածուների և այլ Կոնսորցիումի Անդամների նկատմամբ Հավելված 4-ում (*Թեկնածուների Ընդհանուր Պահանջներ*) ցուցակված պահանջներին:

2.2.2. Թեկնածուները պետք է բավարարեն Հավելված 5-ում (*Որակավորման Չափանիշներ*) ցուցակված Որակավորման Չափանիշներին: Որակավորման Չափանիշներին համապատասխանելու համար Թեկնածուն, այնքանով, որքանով թույլատրվում է սույն ՈՀ-ի և Հավելված 55-ի (*Որակավորման Չափանիշներին*) շրջանակներում, կարող են մասնավորապես հենվել իրենց Կոնսորցիումի Անդամների վրա համարժեք Որակավորման Չափանիշների իրագործման հետ կապված:

2.2.3. Որակավորման Չափանիշներին համապատասխանության մանրամասն կանոնները սահմանված են Հավելված 5-ում (*Որակավորման Չափանիշներ*): Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին և Որակավորման Չափանիշներին համապատասխանությունը հավաստելու համար (ներառյալ՝ Կոնսորցիումի այլ Անդամների վրա հենվելը, ըստ անհրաժեշտության), Թեկնածուները պետք է ներկայացնեն Հավելված 6-ում (*Որակավորման Հայտի Բովանդակությունը*) սահմանված փաստաթղթերը:

Եթե Որակավորման Հայտը ներկայացվում է Կոնսորցիումի կողմից, Առաջատար Անդամը պետք է Կոնսորցիումի անդամներից հավաքի և ներկայացնի բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջվում են

Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը)՝ որպես միասնական Որակավորման Հայտի մաս:

2.2.4. Կոնսորցիումը կարող է փոփոխել իր կազմը (այդ թվում՝ ավելացնել կամ հեռացնել որևէ Կոնսորցիումի Անդամի) Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետը լրանալուց առաջ: Այդ նպատակով Կոնսորցիումը կարող է համարժեք փոփոխություններ ներկայացնել Որակավորման Հայտում (համաձայն Հոդված 5.3-ի) կամ չեղարկել Որակավորման Հայտը և ներկայացնել նորը (համաձայն Հոդված 5.4-ի):

Կոնսորցիումի կազմում փոփոխությունները Որակավորման Հայտերի Ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո պետք է արգելվեն: Այս պահանջի խախտումը պետք է հիմք ծառայի Որակավորման հայտի մերժման և Ընտրության Ընթացակարգին մասնակցելու համար Հայտատուին որակազրկելու համար:

2.2.5. Որևէ անձ չի կարող լինել Կոնսորցիումի Անդամ մեկ Կոնսորցիումում՝ միաժամանակ հանդիսանալով (կամ իր հետ Փոխկապակցված Ընկերությունը) այլ Կոնսորցիումում Կոնսորցիումի Անդամ: Ցանկացած Հայտատուի, ով խախտում կամ խախտել է այս կանոնն Ընտրության Ընթացակարգի ժամանակ կամ մասնակցում է Ընտրության Ընթացակարգին՝ հենվելով Կոնսորցիումի Անդամի վրա, ով խախտում կամ խախտել է այս կանոնն Ընտրության Ընթացակարգի ժամանակ, պետք է մերժվի Ընտրության Ընթացակարգին մասնակցությունը:

2.2.6. Ընտրության Ընթացակարգի ցանկացած փուլում Թեկնածուի վերահսկողության փոփոխությունը (մինչև Պայմանագրի ստորագրումն այն դեպքում, երբ նման Հայտատուն սահմանվում է որպես Ընտրության Ընթացակարգի հաղթող), որը հանգեցնում է Թեկնածուի նկատմամբ Հավելված 4-ով (*Հայտարարներին ներկայացվող Ընդհանուր Պահանջներ*) և/կամ սահմանված պահանջների և/կամ Հավելված 5-ով (*Որակավորման Չափանիշներ*) սահմանված Որակավորման չափորոշիչների համաձայն Թեկնածուի անհամապատասխանությանը, պետք է արգելվի: Այս պահանջի խախտումը պետք է հիմք ծառայի Որակավորման Հայտի մերժման և Հայտատուին Ընտրության Ընթացակարգին մասնակցելու համար Հայտատուին որակազրկելու համար:

2.3. Հատուկ նպատակի գործիք

2.3.1. Ընտրության Ընթացակարգին և Ծրագրի իրականացմանը համատեղ մասնակցությամբ հետաքրքրված թեկնածուները կարող են (սակայն պարտադրված չեն) ստեղծել հատուկ նշանակության գործիք՝ իրավաբանական անձ, որը հատուկ հիմնադրվում է Ընտրության Ընթացակարգին համատեղ մասնակցության նպատակով («**ՀԼԳ**»):

2.3.2. ՀԼԳ-ն կարող է գրանցվել կամ Հայաստանում, կամ այլ իրավագրության ներքո՝ հաշվի առնելով Հավելված 4-ում (*Հայտարարներին ներկայացվող Ընդհանուր Պահանջներ*) սահմանված սահմանափակումները:

Հայաստանյան ՀԼԳ-ն պետք է հիմնադրվի՝ հաշվի առնելով Կիրառելի Օրենքի պարտադիր պահանջները:

2.3.3. Տարրնկալումներից խուսափելու համար՝ Որակավորման Հարցման նպատակով ՀԼԳ-երի և դրանց բաժնետերերի նկատմամբ պետք է տարածվի Կիրառելի Օրենքի շրջանակներում և Կոնսորցիումների ու դրանց մասնակիցների համար Որակավորման Հարցմամբ նախատեսված պահանջները, որակավորման ու գնահատման ընթացակարգերը, բացառությամբ՝ Կիրառելի Օրենքի առանձնահատուկ պահանջները Կոնսորցիումի կողմից ապագայում ստեղծվելիք ծրագրի ընկերության հանդեպ (որպես Ծրագրի Ընկերություն գործելու համար նախատեսված Հայաստանում հիմնադրված ՀԼԳ-ի միջոցով դիմելու դեպքում):

2.3.4. ՀԼԳ-ն և նրա բաժնետերերը պետք է ներկայացնեն բոլոր փաստաթղթերը, որոնք պետք է իրագործվեն սույն ՈՀ-ի ներքո Կոնսորցիումի Անդամների կողմից, ներառյալ՝ կոնսորցիումի համաձայնագիրը:

2.3.5. Որակավորման Հայտը պետք է հստակորեն մատնանշի, որը Կոնսորցիումը ՀԼԳ է, ինչպես նաև՝ հստակեցնի՝ Առաջատար Անդամին և Կոնսորցիումի այլ Անդամներին՝ որպես ՀԼԳ-ի բաժնետերեր:

- 2.3.6. Որպես ՀՆԳ Որակավորման Հայտ ներկայացնելիս՝ Կոնսորցիումը և նրա բաժնետերերը չեն կարող ներառել Կոնսորցիումի որևէ այլ Անդամի: Հավելված 4-ի (Հայտատուների ներկայացվող Ընդհանուր Պահանջներ) պարագրաֆ 1-ի խաչաձև-բաժնետիրությունն արգելող կանոնները չպետք է կիրառվեն ՀՆԳ և նրա բաժնետերերի միջև հարաբերությունների նկատմամբ:
- 2.3.7. ՀՆԳ բոլոր բաժնետերերը պետք է ունենան ՀՆԳ-ում առնվազն 10 % ձայնի իրավունքներ կամ բաժնեմաս:
- Որպես Առաջատար Անդամ ՀՆԳ բաժնետերը պետք է համապատասխանի Հոդված 2.1.3-ով Առաջատար Անդամի նկատմամբ սահմանված պահանջներին:
- 2.3.8. ՀՆԳ-ն պետք է հատուկ ստեղծվի Ընտրության Ընթացակարգին մասնակցելու նպատակով (և եթե ՀՆԳ-ն գրանցված է Հայաստանում, գործի որպես Ծրագրի Ընկերություն) և կարող է ներգրավել այնպիսի գործունեություններում, որոնք կապված են Ընտրության Ընթացակարգի և Ծրագրի հետագա իրագործման հետ Համաձայնագրի պայմաններին համարժեք:
- 2.3.9. Եթե ՀՆԳ-ն գրանցված է Հայաստանում, առանձին Ծրագրի Ընկերություն հիմնադրելու վերաբերյալ Որակավորման Հարցման պահանջները կիրառելի չեն: Նման դեպքում ՀՆԳ-ն կարող է համարվել Ծրագրի Ընկերություն, և Ծրագրի Ընկերության նկատմամբ Որակավորման Հարցման բոլոր պահանջները պետք է կիրառվեն ՀՆԳ-ի նկատմամբ, ինչը ենթակա է անհրաժեշտ փոփոխությունների:
- Այն դեպքում, երբ հիմնադրվում է առանձին Ծրագրի Ընկերություն, ՀՆԳ-ն պետք է ունենա Ծրագրի Ընկերության ձայնի իրավունքների կամ բաժնեմասի 100%-ը:
- 2.3.10. Տարրնկալումներից խուսափելու համար՝ 203 Հոդվածի դրույթները չեն սահմանափակում Ընտրության Ընթացակարգին մասնակցությունը ոչ կորպորացված Կոնսորցիումի միջոցով (այսինքն՝ առանց ՀՆԳ ստեղծելու) սույն Որակավորման Հարցման պահանջներին համապատասխան:

2.4. Ծրագրի ընկերությունը

- 2.4.1. Ընտրության Ընթացակարգի հաղթող ճանաչված Հայտատուն Ծրագրի իրականացման համար պարտավորված կլինի հիմնել իրավաբանական անձ («**Ծրագրի Ընկերություն**») Կիրառելի Օրենքի շրջանակներում: Ծրագրի Ընկերության հիմնադրման հետ կապված կանոնները հետագայում հստակեցվում են Որակավորված Հայտատուների համար նախատեսված Առաջարկի Հրավերում:
- 2.4.2. Ծրագրի Ընկերության բաժնեմասային կառուցվածքը պետք է Պայմանագրի իրականացման ժամանակ համապատասխանի այնպիսի ընկերության բաժնեմասային կառուցվածքին, ինչն արտացոլվել է Ընտրության Ընթացակարգի հաղթող ճանաչված Հայտատուի հայտում:
- 2.4.3. Հաղթող Կոնսորցիումի յուրաքանչյուր Անդամ, բացի Առաջատար Անդամից պետք է Պայմանագրի իրագործման ժամանակ ունենա ապագա Ծրագրի Ընկերությունում առնվազն 10 % ձայնի իրավունք կամ բաժնեմաս:
- Հաղթող Կոնսորցիումի բոլոր Անդամները պետք է Պայմանագրի իրագործման ժամանակ համախառն ունենան Ծրագրի Ընկերության 100% ձայնի իրավունքը կամ բաժնեմասը:
- 2.4.4. Պայմանագրի կատարումից հետո Ընտրության Ընթացակարգի հաղթողը և Կոնսորցիումի Անդամները, որպես Ծրագրի Ընկերության բաժնետերեր, պետք է համապատասխանեն Համաձայնագրի «Բաժնեմասերի Փոփոխություններ» վերնագիրը կրող հոդվածում սահմանված պահանջներին:

2.5. Լիազորված անձինք

- 2.5.1. Լիազորված Անձինք այն անձինք են, ովքեր լիազորված են ներկայացնելու Հայտատուին համարժեք Լիազորող Փաստաթղթերի միջոցով (իրավիճակից կախված) Ընտրության Ընթացակարգի հետ կապված, ներառյալ՝ (սույն ՈՒՀ-ի նպատակներից ելնելով) այնպիսի

հանգամանքների հետ կապված, ինչպիսիք են Որակավորման Հայտի ստորագրումն ու ներկայացումը, ինչպես նաև՝ Որակավորման Հայտի հետ կապված ողջ հաղորդակցությունը:

2.5.2. Այն դեպքում, երբ Լիազորված Անձը գործում է լիազորագրի հիման վրա, վերջինս պետք է համապատասխանի *Հավելված 6-ի (Որակավորման Հայտի բովանդակությունը) Error! Reference source not found.*-ում (Լիազորագրի բովանդակային պահանջներ) ամրագրված՝ լիազորագրի բովանդակության վերաբերյալ պահանջներին: Այն դեպքում, երբ Լիազորված Անձը գործում է Լիազորող Փաստաթղթերի հիման վրա, վերջիններս պետք է հստակ սահմանեն Ընտրության Ընթացակարգում տվյալ Լիազոր Անձի՝ Հայտատուին ներկայացնելու իրավասությունները, որոնց շրջանակը պետք է լինի առնվազն այնքան, որքան Հավելված 6-ի (Որակավորման Հայտի բովանդակությունը) *Error! Reference source not found.*-ում (Լիազորագրի բովանդակային պահանջներ) նշվածը:

2.5.3. Հայտատուներին խորհուրդ է տրվում Ընտրության Ընթացակարգում մասնակցելու նպատակով իրենց Լիազորված Անձանց նշանակել լիազորագրի բովանդակության հիման վրա: Հայտատուն կարող է առաջադրել մինչև տաս (10) Լիազորված Անձանց: Լիազորված Անձանց ամբողջական ցուցակը յուրաքանչյուր Լիազորված Անձի համար Լիազորող Փաստաթղթերի նշագրմամբ պետք է ներկայացվեն՝ որպես Որակավորման Հայտի մաս՝ համաձայն *Հավելված 66-ի (Որակավորման Հայտի բովանդակությունը) Error! Reference source not found.*-ի (Հիմնական Տեղեկատվության Ձև):

2.6. Գնահատող Հանձնաժողովը

2.6.1. Ծրագրի իրականացման վերաբերյալ Որոշմամբ [Որոշման մանրամասները ենթակա են լրացման] Կառավարությունը ձևավորում է Ընտրության Ընթացակարգն իրականացնելու համար պատասխանատու հատուկ մարմին («Գնահատող Հանձնաժողով»), մասնավորապես՝ Որակավորման Հայտերի (սույն ՈՀ-ի նպատակով) բացման և գնահատման համար:

Ընտրության Ընթացակարգի շրջանակներում Գնահատող Հանձնաժողովի կարգավիճակը, իրավասություններն ու գործողությունները (ներառյալ՝ Առաջարկի Հրավերի փուլում) սահմանված են ՊՄԳ Օրենքում, ՊՄԳ Ընթացակարգում և Կառավարության կողմից հաստատված՝ Գնահատող Հանձնաժողովի առանձին ընթացակարգային կանոններում: ՈՀ-ն և ԱՀ-ն կարող են հետագայում հստակեցնել և լրացնել այդ դրույթները այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են Ընտրության Ընթացակարգի իրականացման համար՝ Կիրառելի Օրենքի համաձայն:

2.6.2. Գնահատող Հանձնաժողովի անդամները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցեն որևէ Որակավորման Հայտի պատրաստման և/կամ ներկայացման գործընթացում և չպետք է տրամադրել որևէ աջակցություն որևէ Թեկնածուի այդ նպատակներով:

Գնահատող Հանձնաժողովի անդամները պետք է լինեն անկախ և անկողմնակալ ընդ իրավասությունների շրջանակներում որոշումների կայացման ընթացքում և չպետք է ունեն Շահերի բախում որևէ Հայտատուի հետ:

2.7. Խորհրդատուները

2.7.1. Գնահատող Հանձնաժողովը կարող է հրավիրել արտաքին խորհրդատուների Ընտրության Ընթացակարգի ընթացքում նրանց փորձառության շրջանակներում համարժեք հարցերի վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու համար, ինչպես նաև՝ Պայմանագրի բանակցությունների և ստորագրման ընթացքում («Խորհրդատուներ»):

Խորհրդատուները կարելի է ներկա գտնվել Գնահատող Հանձնաժողովի նիստերի ժամանակ, տրամադրել բացատրություններ և խորհրդատվություն այդ նիստերի ընթացքում, ուսումնասիրել և դիտարկումներ մտերկայացնել Հայտատուների կողմից Գնահատող Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթեր վերաբերյալ, դիտարկումներ ներկայացնել Գնահատող Հանձնաժողովի արձանագրությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ Պայմանագրի բանակցությունների և ստորագրման ընթացքում առկա փաստաթղթերի վերաբերյալ: Իրենց համապատասխան

պարտականությունների կատարման ժամանակ, Խորհրդատուների պետք է կապակցված լինեն նույն գաղտնիության պահանջերով, ինչ որ Գնահատող Հանձնաժողովի անդամները:

2.7.2. Խորհրդատուները Գնահատող Հանձնաժողովի անդամ չեն և չպետք է ունենան քվեարկելու իրավունք Գնահատող Հանձնաժողովի նիստերի ժամանակ քննարկված հարցերի վերաբերյալ, ինչպես նաև՝ Պայմանագրի բանակցությունների և ստորագրման ժամանակ Իրավասու Մարմնի որոշումների առնչությամբ: Խորհրդատուների ներկայությունը կամ բացակայությունը Գնահատող Հանձնաժողովի նիստերին չի ազդում այդ նիստերի իրավազորության վրա:

2.8. Լիազորված Պաշտոնյաները

2.8.1. Գնահատող Հանձնաժողովի նախագահը, Նախագահի տեղակալը և Գնահատող Հանձնաժողովի քատուղարը պետք է առաջադրվեն որպես Իրավասու Մարմնի Լիազորված Պաշտոնյաներ: Սույն Որակավորման Հարցման հաստատման օրվա դրությամբ Լիազորված պաշտոնյաների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է Տեղեկատվական Թերթիկում: Իրավասու Մարմինը պետք է ծանուցի Թեկնածուներին Լիազորված Պաշտոնյաների վերաբերյալ Տեղեկատվական Թերթիկում մատնանշված տեղեկատվության փոփոխությունների մասին՝ համաձայն Հոդված 5.1.1-ի:

2.9. Հաղորդակցություն

2.9.1. Սույն Որակավորման Հարցմամբ նախատեսված ողջ հաղորդակցությունը (ներառյալ՝ Որակավորման Հայտերի ներկայացումը, Որակավորման Հայտերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը և Որակավորման Հայտերի պարզաբանումները) պետք է ապահովվի Լիազոր Անձանց և Լիազորված Պաշտոնյաների կողմից, եթե Որակավորման Հարցմամբ այլ կարգավորում նախատեսված չէ:

2.9.2. Եթե Որակավորման Հարցմամբ այլ կարգավորում նախատեսված չէ, թղթային և էլեկտրոնային եղանակով սույն ՈՀ-ի շրջանակներում ներկայացված և/կամ ստացված հաղորդակցությունը, տեղեկատվությունը և փաստաթղթերն ունեն հավասար իրավական ուժ: Սա ներառում է, մասնավորապես, Որակավորման Հայտերը, Որակավորման Հայտերի հետ կապված լրացուցիչ տեղեկատվությունը և Գնահատող Հանձնաժողովի հետ հաղորդակցությունը:

3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

3.1. Որակավորման Հայտերի ձևաչափի և բովանդակության ընդհանուր պահանջները

3.1.1. Թեկնածուները պետք է պատրաստեն Որակավորման Հայտերը *Հավելված 6-ում (Որակավորման Հայտեր Բովանդակությունը) սահմանված ձևաչափի և բովանդակային պահանջների համապատասխան*: Յուրաքանչյուր Թեկնածու, ներառյալ՝ Կոնսորցիումը, կարող է ներկայացնել միայն մեկ (1) Որակավորման Հայտ:

3.1.2. Թեկնածուները կարող են ընտրել պատրաստել և ներկայացնել իրենց որակավորման Հայտերը հետևյալ երկու ձևաչափերից յուրաքանչյուրով՝ սույն ՈՀ-ի պահանջներին համապատասխան:

(a) AREMPS-ի միջոցով էլեկտրոնային ձևաչափով (սույն ՈՀ-ի պահանջներին համապատասխան՝ Որակավորման Հայտի էլեկտրոնային տարբերակի հավելյալ գաղտնագրված ներկայացում Գնահատող Հանձնաժողովի էլեկտրոնային փոստին)

կամ

(b) Թղթային տարբերակով Գնահատող Հանձնաժողովին առձեռն ներկայացման միջոցով:

3.1.3. Գնահատող Հանձնաժողովին առձեռն ներկայացնելու համար պատրաստված թղթային Որակավորման Հայտերը ենթակա են հետևյալ ընդհանուր ձև/պատրաստման պահանջներին՝

- (a) Յուրաքանչյուր Թեկնածու պետք է պատրաստի և ներկայացնի իր Որակավորման Հայտը չորս (4) պատճենով, ինչպես պահանջվում է ՊՄԳ Ընթացակարգի դրույթ 79-ով՝ հստակորեն նշագրելով դրանցից յուրաքանչյուրը՝ որպես «ԲՆՕՐԻՆԱԿ», «ՊԱՏՃԵՆ» և «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՏՃԵՆ»:

Առձեռն փոխանցման համար պատրաստված Որակավորման Հայտի թղթային բնօրինակի և թղթային պատճենի և/կամ էլեկտրոնային պատճենի միջև տարբերությունը չի կարող Որակավորման Հայտը մերժելու հիմք լինել:

- (b) Որակավորման Հայտի գրավոր բնօրինակը և գրավոր պատճենը պետք է տպագրված կամ գրված լինեն (եթե կիրառելի է) չջնջվող թանաքով և ստորագրվեն Լիազորված Անձի կողմից:

Որակավորման Հայտի բոլոր էջերը, ինչպես նշված է Հավելված 6-ի (Որակավորման Հայտերի բովանդակությունը) բովանդակային պահանջներում, պետք է թվագրված լինեն և ստորագրված Լիազոր Անձի կողմից:

- (c) Առձեռն փոխանցելու համար պատրաստված Որակավորման Հայտի յուրաքանչյուր էլեկտրոնային պատճեն պետք է տրամադրվի առանձին USB կրիչով: Որակավորման Հայտերի էլեկտրոնային պատճենները պետք է համարժեք լինեն բնօրինակ Որակավորման Հայտի թղթային տարբերակի բովանդակությանը, զերծ լինեն որևէ վիրուսից կամ malware-ից և պարունակեն չխտացված և չպաշտպանված ֆայլեր տպագրման ենթակա և վերարտադրելի PDF ձևաչափով:

Տարընկալումից խուսափելու նկատառումներով՝ հստակ պահանջվում է, որ յուրաքանչյուր USB կրիչ պարունակի PDF ձևաչափով ամբողջական բնօրինակ Որակավորման Հայտի թղթային տարբերակը:

3.1.4. ARMEPS-ի միջոցով ներկայացնելու համար պատրաստված էլեկտրոնային Որակավորման Հայտը ենթակա է հետևյալ ընդհանուր ձև/պատրաստման պահանջներին

- (a) Յուրաքանչյուր Թեկնածու պետք է պատրաստի իր Որակավորման Հայտի երկու (2) էլեկտրոնային տարբերակ՝ մեկ (1) բնօրինակ տարբերակ ARMEPS-ի միջոցով ներկայացնելու համար և մեկ (1) հավելյալ պատճեն Գնահատող Հանձնաժողովին գաղտնագրված էլեկտրոնային փոստով ուղարկելու համար՝ հստակ նշագրելով դրանցից յուրաքանչյուրը որպես «ԲՆՕՐԻՆԱԿ» և «ՊԱՏՃԵՆ»:

- (b) Որակավորման Հայտի վերը 3.1.4.(a) կետում նշված յուրաքանչյուր էլեկտրոնային տարբերակ պետք է համապատասխանի Հավելված 6-ում (Որակավորման Հայտի Բովանդակություն) տրված կառուցվածքի հետ, պետք է զերծ լինեն ցանկացած վիրուսից կամ malware-ից և պարունակեն չխտացված և չպաշտպանված ֆայլեր տպագրման ենթակա և վերարտադրելի PDF ձևաչափով: Որակավորման Հայտի այս երկու էլեկտրոնային տարբերակների բոլոր էջերը պետք է համարակալված լինեն և ստորագրված Լիազոր Անձի կողմից:

- (c) Թեկնածուն պետք է հետևի ներբեռնելու համար ARMEPS-ի Ձեռնարկի տեխնիկական պահանջներին և ներկայացնի Որակավորման Հայտի էլեկտրոնային բնօրինակ տարբերակը ARMEPS-ի միջոցով:

Թեկնածուն պետք է պատրաստի և ARMEPS-ում ներբեռնված իր Որակավորման Հայտի բնօրինակ էլեկտրոնային տարբերակի հավելյալ պատճենը ներկայացնի էլեկտրոնային փոստի միջոցով Տեղեկատվական Թերթիկում նշված՝ Գնահատող Հանձնաժողովի գաղտնագրված էլեկտրոնային փոստին: Թեկնածուի Որակավորման Հայտի հավելյալ էլեկտրոնային պատճենով նման գաղտնագրված էլեկտրոնային փոստը պետք է ուղեկցվի գաղտնազերծմամբ (առանձին էլեկտրոնային փոստով), որը պետք է հասանելի լինի միայն Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի համար (ներառյալ՝ նման գաղտագրված էլեկտրոնային փոստը բացելու, ընթերցելու և ներբեռնելու համար անհրաժեշտ իրավասությունների պայմանները):

3.1.5. Թեկնածուներն իրենց Որակավորման Հայտերում չպետք է ներկայացնեն որևէ տեղեկատվություն կամ փաստաթղթեր, որոնք ակնհայտորեն չեն պահանջվում Հավելված 6-ով (Որակավորման Հայտերի Բովանդակությունը) կամ սույն ՈՀ-ով: Որպես Որակավորման Հայտի մաս՝ Թեկնածուի հայտին վերաբերող ցանկացած տեղեկատվության կամ

փաստաթղթերի (մասնավորապես՝ որևէ գնային առաջարկ) ներկայացումը պետք է Որակավորման Հայտը մերժելու հիմք լինի: Որպես Որակավորման Հայտի մաս ցանկացած այլ ոչ անհրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթերի ներկայացումը (ինչպիսիքն են մարքեթինգային նյութերը) կարող է Որակավորման Հայտը մերժելու հիմք լինել այն դեպքում, երբ Գնահատող Հանձնաժողովը սահմանում է, որ նման ներկայացումը նշանակում է Նյութական Շեղում:

3.1.6. Որակավորման Հայտը չպետք է պարունակի փոփոխություններ, բացթողումներ և լրացումներ, եթե Որակավորման Հարցումն այլ բան չի նախատեսում:

3.2. Որակավորման Հայտերի նքումը և նշագրումը

3.2.1. Գնահատող Հանձնաժողովին Որակավորման Հայտի թղթային տարբերակի առձեռն փոխանցման դեպքում Թեկնածուն պետք է ներկայացնի Որակավորման Հայտն անթափանց և պատշաճ կերպով կնքված ծրարով: Ծրարը պետք է պարունակի Որակավորման Հայտի չորս (4) պատճեն և պետք է նշագրված լինի և ձևավորված ՊՄԳ Ընթացակարգի 81-82 հատվածների համաձայն:

3.2.2. Եթե թղթային Որակավորման Հայտը կազմող փաստաթղթերի ծավալը հնարավոր չի դարձնում նման Որակավորման Հայտի բոլոր չորս (4) պատճենների՝ մեկ (1) ծրարով ներկայացումը, Թեկնածուն կարող է ընտրել հետևյալը գործողությունը՝

(a) Որակավորման Հայտի գրավոր օրիգինալ և գրավոր պատճենը տեղավորել երկու տարբեր անթափանց և պատշաճ փակված ծրարներով՝ նշագրված և ձևակերպված ըստ ՊՄԳ Ընթացակարգի 81-82 հատվածների: Յուրաքանչյուր ծրար պետք է այս դեպքում պարունակի Որակավորման Հայտի մեկ (1) էլեկտրոնային պատճեն:

ԿԱՄ

(b) Տեղադրել Որակավորման Հայտի չորս (4) պատճենները (կամ երկու առանձին ծրարներում՝ ինչպես նշվում է սույն Հոդված 3.2.2-ի վերոնշյալ կետ (a)-ում, կամ որպես մեկ փաթեթ) անթափանց և պատշաճ փակված փոստային արկղում: Փոստային արկղը պետք է նշագրված և ձևակերպված լինի ՊՄԳ Ընթացակարգի 81-82 հատվածների համաձայն:

3.2.3. Եթե Որակավորման Հայտի ծրար(ներ)ը կամ փոստային արկղը չեն համապատասխանում սույն Հոդվածի պահանջներին, Գնահատող Հանձնաժողովը չպետք է որևէ պատասխանատվություն կրի Որակավորման Հայտի սխալ տեղավորման կամ բաժինների կորստի համար, ինչպես նաև՝ դրանում պարունակված՝ սահմանափակ օգտագործման տեղեկատվության պաշտպանության համար:

3.2.4. Տարընկալումներից խուսափելու նպատակով սույն 3.2. Հոդվածը չի կարող կիրառվել ARMEPS-ի միջոցով Որակավորման Հայտերի պատրաստման ու ներկայացման համար:

3.3. Որակավորման Հայտերի լեզուն և հաղորդակցության լեզուն

3.3.1. Հավելված 6-ով (Որակավորման Հայտերի Բովանդակությունը) այլ կերպ նախատեսված չլինելու դեպքում Որակավորման Հայտի և հաղորդակցության լեզվի նկատմամբ պետք է գործեն հետևյալ կանոնները՝

(a) Որակավորման Հայտի մաս կազմող բոլոր ձևերը և փաստաթղթերը, ինչպես նախատեսված է Հավելված 66-ով (Որակավորման Հայտի Բովանդակություն) պետք է պատրաստվեն այս լեզուներից որևէ մեկով՝ հայերեն, անգլերեն կամ ռուսերեն («Պաշտոական Լեզուներ»):

(b) Հավելված 66-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը) պահանջվող և ոչ ռեզիդենտ Թեկնածուներին, Կոնսորցիումի Անդամներին և Փոխկապակցված Ընկերություններին վերաբերող՝ հաստատման փաստաթղթերը կամ դրանց որոշակի մասերը կարող են պատրաստվել և ներկայացվել օտար լեզվով (Պաշտոնական Լեզուներից տարբեր): Թեկնածուները պետք է թարգմանեն այդ փաստաթղթերը կամ դրանց մասերը (ըստ անհրաժեշտության) Պաշտոնական Լեզուներից որևէ մեկով Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը) սահմանված հավաստագրման պահանջներին համարժեք:

(c) Որակավորման Հայտի հետ կապված ողջ հաղորդակցությունը պետք է իրականացվի Պաշտոնական Լեզուներից որևէ մեկով:

3.3.2. Հոդված 3.3.1-ի կետ (a)-(c)-երում մատնանշված՝ Պաշտոնական Լեզուներից որևէ մեկով պատրաստված փաստաթղթերի և հաղորդակցության և օտար լեզվի (Պաշտոնական Լեզուներից տարբեր) միջև տարբերությունների դեպքում համապատասխան փաստաթղթերի կամ հաղորդակցության Պաշտոնական Լեզուներով տարբերակը գերակա է:

3.4. Գաղտնի տեղեկատվություն

3.4.1. Թեկնածուն իրավասու է սահմանել Որակավորման Հայտի որոշակի մասեր՝ որպես գաղտնի տեղեկատվություն պարունակող: Սա պետք է ապահովվի՝ Որակավորման Հայտի յուրաքանչյուր նման տեղեկատվություն պարունակող էջի վրա տեղադրելով «ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ» բառերը: Թեկնածուն պետք է նաև ընդգծի ազատ ոճով Որակավորման Հայտի յուրաքանչյուր էջի վրա տեղեկատվության հատուկ մասերը, որոնք պետք է համարվեն որպես գաղտնի տեղեկատվություն: Այս Հոդվածը չպետք է արգելի Գնահատող Հանձնաժողովին՝ Խորհրդատուների համար Որակավորման Հայտը բացահայտելու:

3.4.2. Տվյալների սահմանումը որպես գաղտնի տեղեկատվություն չպետք է կիրառվի այն տեղեկատվության հանդեպ, որը չի որակվում որպես գաղտնի տեղեկատվություն Կիրառելի Օրենքի շրջանակներում:

3.5. Որակավորման Հայտերի ճշգրտության և ամբողջականության պատասխանատվությունը

3.5.1. Թեկնածուն պետք է պարտավորված լինի Որակավորման Հայտում ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության ներկայացման համար: Որակավորման Հայտի ներկայացմամբ Թեկնածուն նաև ճանաչում է, որ՝

(a) Որակավորման Հայտում պարունակված ամբողջ տեղեկատվությունը պետք է պահպանվի ճիշտ Ընտրության Ընթացակարգի ողջ ընթացքում՝ մինչև Համաձայնագրի կնքումը (այն դեպքում, երբ Թեկնածուն ճանաչվում է որպես Ընտրության Ընթացակարգի հաղթող),

(b) Ընտրության Ընթացակարգի ցանկացած փուլում Գնահատող Հանձնաժողովը կարող է որակազրկել Հայտատուին և Իրավասու Մարմինը կարող է հրաժարվել Համաձայնագրի կնքումից այն դեպքում, երբ հաստատվում է, որ Հայտատուն կամավոր ներկայացրել է Որակավորման Հայտում ոչ ճշգրիտ կամ կեղծ տեղեկատվություն,

(c) Գնահատող Հանձնաժողովը և Իրավասու Մարմինը չպետք է պատասխանատու լինի Որակավորման Հայտում պարունակված տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար:

3.6. Տվյալների փոխանցումը

3.6.1. Իրավասու Մարմինը փոխանցում է տեղեկատվության ընտրված մասերը էլեկտրոնային ձևով, որ կարող է անհրաժեշտ լինել Ընտրության Ընթացակարգին մասնակցելու համար: Համարժեք փոխանցվող տեղեկատվությունը ծածկում է՝

(a) հանրային հասանելի (ոչ գաղտնի) տեղեկատվություն Ընտրության Ընթացակարգին մասնակցության համար: Այս տեղեկատվությունը հասանելի է Տեղեկատվական Թերթիկում նշված հղման միջոցով տրված Էլեկտրոնային նախարարության պաշտոնական կայքում:

(b) Ընտրության Ընթացակարգին մասնակցելու համար գաղտնի տեղեկատվություն: Այս տեղեկատվությունը հասանելիություն պետք է տրվի Հայտատուին և այլ օգտագործողներին՝ սույն Որակավորման Հարցման համաձայն՝ Հայտատուի որակավորման և Իրավասու Մարմին Գաղտնիության Նախաձեռնության ներկայացման (ինչպես նկարագրված է Հոդված 7-ում) պայմանով:

3.6.2. Գաղտնիության Նախաձեռնության ստորագրությունից և ներկայացումից հետո Հայտատուն պետք է պատասխանատու լինի նման տեղեկատվության բոլոր համարժեք լիազորված օգտագործողների կողմից տեղեկատվության գաղտնիության և չբացահայտման պահանջներին համապատասխանության համար, ինչպես սահմանվում է Գաղտնիության Նախաձեռնության մեջ:

4. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԲԱՑՈՒՄԸ

4.1. Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետը և կողմնորոշիչ ժամանակացույցը

4.1.1. Թեկնածուները պետք է ներկայացնեն Որակավորման Հայտերն Էկոնոմիկայի նախարարարության պաշտոնական կայքում Հյատարարության հրապարակման օրվանից յոթանասուն (70) օրվա ընթացքում («**Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետ**»): Որակավորման Հայտերը ցանկացած պարագայում պետք է ներկայացվեն Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետի վերջին օրվա ժամը 18:00-ից ոչ ուշ: Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից հետո ներկայացված ցանկացած հայտ չի դիտարկվի:

4.1.2. Որակավորման Հարցումը պարունակում է Ընտրության Ընթացակարգի հիմնական արդյունքների և դրանց կողմնորոշիչ ժամանակացույցը սույն ՈՀ-ի նպատակներով («**Կողմնորոշիչ ժամանակացույց**») Հավելված 2-ում (Կողմնորոշիչ ժամանակացույց): Թեկնածուները կարող են օգտագործել Կողմնորոշիչ ժամանակացույցը ընդհանուր առմամբ, սակայն չպետք է որևէ կերպ հենվեն Կողմնորոշիչ ժամանակացույցի վրա Ընտրության Ընթացակարգին իրենց մասնակցության հետ կապված:

4.1.3. Իրավասու Մարմինը կարող է իր հայեցողությամբ և առանց Թեկնածուներին նախապես ծանուցելու փոփոխել Կողմնորոշիչ ժամանակացույցը: Գնահատող Հանձնաժողովը պետք է ծանուցի Թեկնածուներին Կողմնորոշիչ ժամանակացույցի փոփոխությունների վերաբերյալ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում հրապարակված հայտարարության միջոցով: Իրավասու Մարմինը չպետք է կրի որևէ պատասխանատվություն, որ այս կամ այն կերպ ծագում է Կողմնորոշիչ ժամանակացույցի փոփոխությունից:

4.2. Թղթային Որակավորման Հայտերի ներկայացման կարգավորումներ

4.2.1. Գնահատող Հանձնաժողովին թղթային Որակավորման Հայտերի ներկայացման դեպքում Թեկնածուի Լիազորված Անձը պետք է նախնական հարցում ուղարկի Գնահատող Հանձնաժողովի քարտուղարին Որակավորման Հայտի ներկայացման վերաբերյալ: Լազորված Անձը կարող է ներկայացնել այդ հարցումը՝

- (a) Առձեռն՝ Տեղեկատվական Թերթիկում մատնանշված՝ Գնահատող Հանձնաժողովի հասցեին և համաձայն աշխատանքային օրացույցի, կամ
- (b) Էլեկտրոնային փոստի միջոցով Գնահատող Հանձնաժողովի՝ Տեղեկատվական Թերթիկում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

4.2.2. Որակավորման Հարցման ներկայացման հարցումը պետք է՝

- (a) Նշի Թեկնածու լրիվ անվանումը,
- (b) Նշի Լիազորված Անձի լրիվ անվանումը, ով կներկայացնի Որակավորման Հայտը,
- (c) Նշի Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետում Որակավորման Հայտը ներկայացնելու պահանջվող օրը և ժամը՝ Տեղեկատվական Թերթիկում սահմանված՝ Գնահատող Հանձնաժողովի աշխատանքային ժամանակացույցի համաձայն,
- (d) Պարունակի նույնականացմա փաստաթղթերի պատճենները և Որակավորման Հայտը ներկայացնող Լիազորված Անձի Լիազորող Փաստաթղթերի (կոշտ պատճենները, եթե հարցումը ներկայացվում է Գնահատող Հանձնաժողովի հասցեին առձեռն, սկանավորված պատճենների էլեկտրոնային առդիրները, եթե հարցումն ուղարկվում է էլեկտրոնային փոստի միջոցով):

Եթե հարցումն ուղարկվում է Գնահատող Հանձնաժողովի հասցեին առձեռն, Լիազորված Անձը պետք է ունենա օրիգինալ նույնականացման փաստաթղթերը Գնահատող Հանձնաժողովի գտնվելու վայր մուտքի համար:

Նույնականացման փաստաթղթերի պատճենները վերոնշյալ (d) կետում, որոնք օտարալեզու են (Պաշտոնական Լեզուներից բացի) պետք է թարգմանվեն և հավաստվեն Հավելված 6-ի (Որակավորման Հարցման Բովանդակությունը) պահանջների համաձայն:

4.2.3. Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը ոչ ուշ քան Թեկնածուի՝ Որակավորման Հայտը ներկայացնելու հարցման օրվանից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում պետք է տրամադրի էլեկտրոնային փոստով պատասխան: Այս պատասխանը պետք է սահմանի Որակավորման Հայտի ներկայացման օրը և ժամը (որը պետք է լռելյայն լինի ոչ ուշ քան ըստ Հոդված 4.2.2-ի Թեկնածուի կողմից պահանջված ժամկետին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, բայց որևէ դեպքում՝ ոչ ուշ, քան Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետը), ինչպես նաև՝ նշի այլ տեղեկատվություն, որը կարող է համարժեք լինել Որակավորման Հայտի ներկայացման համար: Լիազորված Անձը պետք է ընդունի էլեկտրոնային փոստի միջոցով Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի պատասխանի ստացումը Որակավորման Հայտը նախատեսված օրը և ժամին ներկայացնելու վերաբերյալ:

4.2.4. Տարընկալումներից խուսափելու համար սույն 4.2-ը Հոդվածը չի կարող կիրառվել ARMEPS-ի միջոցով Որակավորման Հայտերի ներկայացման նկատմամբ:

4.3. Որակավորման Հայտերի ներկայացումը և գրանցումը

4.3.1. Գնահատող Հանձնաժողովին թղթային Որակավորման Հայտերի առձեռն փոխանցման դեպքում Որակավորման Հայտերի ներկայացումն ու գրանցումը պետք է իրականացվի ստորև 4.3.2 – 4.3.4 Հոդվածներին համարժեք (ինչը չի կարող կիրառվել ARMEPS-ի միջոցով Որակավորման Հայտերի ներկայացման նկատմամբ):

4.3.2. Լիազորված Անձը պետք է տրամադրի թղթային Որակավորման Հայտը առձեռն Գնահատող Հանձնաժողովի քարտուղարին ըստ Հոդված 4.2-ի պլանավորված օրը և ժամին: Լիազորված Անձը պետք է ունենա օրիգինալ նույնականացման փաստաթղթերը և Լիազորող Փաստաթղթերի պատճենները Գնահատող Հանձնաժողովի գտնվելու վայր մուտքը թույլատրվելու համար:

Տարընկալումներից խուսափելու նպատակով՝ հստակ ամրագրվում է, որ Թեկնածուներին չպետք է թույլատրվի ներկայացնել իրենց Որակավորման Հայտերը փոստով կամ հեռակապով:

4.3.3. Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը պետք է գրանցի թղթային Որակավորման Հայտը իր գրանցամատյանում Լիազորված Անձի ներկայությամբ՝ ստուգելով և հաստատելով, որ Որակավորման Հայտի և Լիազորված Անձի Լիազորող Փաստաթղթերի ծրար(ներ)ը կամ փաստային արկղը պատրաստված են սույն Որակավորման Հարցման համապատասխան: Ծրար(ներ)ը կամ փաստային արկղը չպետք է բացվեն Որակավորման Հայտի գրանցման ընթացքում: Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը իր գրանցամատյանում նշում է կատարում ՊՄԳ Ընթացակարգի պարագրաֆ 83-ում նշված գրանցման մանրամասները, ինչպես նաև՝ Լիազորված Անձի լրիվ անունը և ըստ Հոդված 3.2-ի Որակավորման Հայտերի ծրար(ներ)ի կամ փաստային արկղի պատրաստման պահանջների անհամապատասխանության վերաբերյալ (այդպիսին լինելու դեպքում):

4.3.4. Թղթային Որակավորման Հայտի գրանցման ժամանակ Լիազորված Անձը պետք է ստորագրի գրանցամատյանում՝ հավաստելու Որակավորման Հայտի պատշաճ ստացումը և գրանցումը: Եթե Լիազորված Անձը հրաժարվում է ստորագրել, Գնահաման Հանձնաժողովի քարտուղարը պետք է նշում կատարի այդ մասին գրանցամատյանում: Ստորգրման նույն կանոնները կարող է կիրառվել (որտեղ համարժեք է), եթե Որակավորման Հայտը ենթակա չէ ընդունման և գրացման՝ համաձայն Հոդված 4.3.5-ի:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը պետք է Լիազորված Անձին տրամադրի հետևյալ տեղեկատվությունը պարունակող թերթիկը՝

(a) Ըստ վերը նշված Հոդված 4.3.3-ի գրանցման մանրամասները,

- (b) Նշում՝ արդյոք Թեկնածուն հրավիրվում է հաջորդիվ Որակավորման հայտերի բացման նիստին,
- (c) Որակավորման Հայտերի բացման նիստի պլանավորված օրվա, ամի և վայրի մասին նշում,
- (d) Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի լրիվ անունը, որն իրականացրել է Որակավորման Հայտի գրանցումը:

4.3.5. ARMEPS-ի միջոցով Որակավորման Հայտերի ներկայացման դեպքում Թեկնածուի Որակավորման Հայտերը պետք է համարվեն գրանցված՝

- (a) ARMEPS-ում հաղորդագրության հիման վրա, որով նշվում է, որ Որակավորման Հայտը հաջողությամբ ներբեռնվել է ARMEPS-ում (ըստ ARMEPS-ի ֆունկցիոնալության), և
- (b) Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային փոստի հիման վրա, որով հավաստվում է, որ Թեկնածուի Որակավորման Հայտի հավելյալ տարբերակը սույն ՈՀ-ին համապատասխան գաղտնագրված էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է: Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի նման էլեկտրոնային փոստը պետք է պարունակի՝ (i) Թեկնածուի Որակավորման Հայտի հավելյալ էլեկտրոնային տարբերակի գրանցման տվյալները (Թեկնածուի գաղտնագրված էլեկտրոնային հաղորդագրության ստացման գրանցման համարը, ամսաթիվը և ժամը), (iii) Որակավորման Հայտերի բացման հանդիպման պլանավորված ամսաթվի, ժամի և տեղի մասին նշում, (iv) Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի ամբողջ անունը, ով իրականացրել է Որակավորման Հայտի հավելյալ էլեկտրոնային տարբերակի գրանցումը:

4.3.6. Հետևյալ Որակավորման Հայտերը չպետք է ընդունվեն և գրանցվեն՝

- (a) Որակավորման Հայտերը, որոնք ներկայացված են փոստով կամ հեռակապով: Փոստով ներկայացված Որակավորման Հայտերը պետք է վերադարձվեն առանց բացելու (ծրար(ներ)ով կամ փոստային արկղով) ուղարկողին համարժեք մերժման ծանուցմամբ: Հեռակապով ներկայացված Որակավորման Հայտերը պետք է անտեսվեն՝ ուղարկողին հեռակապով մերժման համարժեք ծանուցում ուղարկելով:
- (b) Հոդված 3.2-ի կամ Հոդված 4.2-ի խախտումներով ներկայացված Որակավորման Հայտերը, ինչպես նաև՝ Որակավորման Հայտերի ներկայացման ժամանակ պահանջվող՝ նույնականացման փաստաթղթեր և Լիազորող Փաստաթղթեր չներկայացրած անձանց կողմից ներկայացված Որակավորման Հայտերը: Այս Որակավորման Հայտերը պետք է վերադարձվեն առանց բացելու ծրար(ներ)ում կամ փոստային արկղում (եթե կիրառելի է) համարժեք մերժման ծանուցմամբ առձեռն Լիազորված Անձին և/կամ այն անձին, ով չի ներկայացրել համարժեք նույնականացման փաստաթղթեր կամ Լիազորող Փաստաթղթեր (ըստ անհրաժեշտության):
- (c) ARMEPS-ի Ձեռնարկում նշված ներկայացման պահանջների խախտումով ներկայացված Որակավորման Հայտերը, ինչպես նաև՝ Հոդված 3.1.4 (c)-ում սահմանված գաղտնագրման պահանջներին չհամապատասխանող Որակավորման Հայտերի հավելյալ էլեկտրոնային տարբերակները: Նման Որակավորման Հայտերը պետք է վերադարձվեն առանց բացելու (եթե կիրառելի է) Լիազորված Անձին էլեկտրոնային փոստով համարժեք մերժման ծանուցմամբ և/կամ ARMEPS-ում հաղորդագրությամբ՝ նշելով, որ Որակավորման Հայտը հաջողությամբ չի ներբեռնվել ARMEPS-ում (ըստ ARMEPS-ի ֆունկցիոնալությամբ):
- (d) Որակավորման Հայտերը, որոնք ներկայացվել են Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից հետո: Այդ Որակավորման Հայտերը պետք է վերադարձվեն առանց բացելու՝ Թեկնածուին համարժեք մերժման ծանուցմամբ:

4.3.7. Տարրնկալումներից խուսափելու համար՝ յուրաքանչյուր Թեկնածու համաձայնում և ընդունում է, որ այդ Թեկնածուի կողմից սույն Որակավորման Հարցման շրջանակներում Որակավորման Հայտի ներկայացումը համարվում է ՈՀ-ի պայմանների ընդունում, ներառյալ, սակայն չսահմանափակվելով Որակավորման Չափանիշների մրցակցային և ոչ խտրական բնույթը: Թեկնածուն համաձայնում է նախաձեռնել Կիրառելի Օրենքի կամ միջազգային օրենքի հետ սույն ՈՀ-ի և Որակավորման Չափանիշների պայմանների

համապատասխանության ցանկացած խնդիր նախքան Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետն ավարտվելը:

4.4. Որակավորման Հայտերի բացումը

- 4.4.1. Գնահատող Հանձնաժողովը պետք է Որակավորման Հայտերի (և՛ թղթային, և՛ ARMEPS-ի միջոցով ներկայացված) բովանդակության բացմանը նվիրված նիստ անցկացնի Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը: Այս նիստի պլանավորված օրը, ժամը և վայրը սահմանվում են Տեղեկատվական Թերթիկում:
- 4.4.2. Այս նիստին Գնահատող Հանձնաժողովը պետք է (i) բացի գրանցված թղթային Որակավորման Հայտերի ծրարները և փոստային արկղերը, ներառյալ՝ ըստ Հոդված 5.3-ի փոփոխություններով թղթային Որակավորման Հայտերի ծրարները և փոստային արկղերը և (ii) բացի ARMEPS-ի միջոցով ներկայացված և գրանցված Որակավորման Հայտերի բնօրինակ տարբերակների բովանդակությունը Լիազորված Անձանց ներկայությամբ, ովքեր մասնակցում են նիստին, և պետք է հետագայում որոշեն՝ արդյոք Որակավորման Հայտերը՝
- (a) ամբողջական են, պարունակում են պատշաճ պատաստված փաստաթղթերը և ընդհանուր առմամբ այն հաջորդականությամբ են, որը սահմանված է *Հավելված 6-ում (Որակավորման Հայտերի Բովանդակությունը)* և
- (b) իրենց ձևով և կառուցվածքով համապատասխանում են Որակավորման Հարցման պահանջներին առանց ակնհայտ Նյութական Շեղումների, սխալների կամ այլ ձևական խախտումների:

Գնահատող Հանձնաժողովը պետք է ARMEPS-ի միջոցով ներկայացված Որակավորման Հայտի հավելյալ էլեկտրոնային տարբերակի գաղտնագրված էլեկտրոնային հաղորդագրությունը բացի միայն այն դեպքում, երբ Գնահատող Հանձնաժողովը ի վիճակի չէ ARMEPS-ի ֆունկցիոնալությամբ պայմանավորված տեխնիկական պատճառներով բացել ARMEPS-ի միջոցով ներկայացված Որակավորման Հայտերի բնօրինակ տարբերակները: Այս դեպքում գաղտնագրված էլեկտրոնային հաղորդագրությամբ Որակավորման Հայտի հավելյալ էլեկտրոնային տարբերակը պետք է համարվի ARMEPS-ի միջոցով ներկայացված Որակավորման Հայտի բնօրինակ տարբերակ:

Տարրնկալումից խուսափելու նպատակով Որակավորման Հայտերի բացման նիստը չպետք է ներառի Որակավորման Հայտերի գնահատումը սույն ՈՀ-ի համաձայն:

4.4.3. Լիազորված Անձինք պետք է ունենան նույնականացման բնօրինակ թաստաթղթերը և Լիազորող Փաստաթղթերի պատճենները Գնահատող Հանձնաժողովի գործունեության վայր մուտքի և Որակավորման Հայտերի բացման նիստին մասնակցելու համար: Այս նիստին մասնակցող Լիազորված Անձինք պետք է ստորագրեն Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի գրանցամատյանը՝ փաստելով իրենց ներկայությունը: Եթե Լիազորված Անձը չի կարողանում ներկայանալ, Գնահատող Հանձնաժողովը շարունակում է ապահովել Որակավորման Հայտերի բացման նիստը և պետք է արտացոլի Լիազորված Անձի բացակայությունն արձանագրության մեջ:

4.4.4. Որակավորման Հայտերի բացման նիստի արդյունքները պետք է փաստաթղթավորվեն Գնահատող Հանձնաժողովի արձանագրությամբ՝ ՊՄԳ Ընթացակարգի համաձայն (մասնավորապես՝ ինչպես սահմանված է ՊՄԳ Ընթացակարգի 89-91 պարագրաֆներում): Արձանագրությունը պետք է ստորագրվի Գնահատող Հանձնաժողովի անդամների և նիստին ներկա Լիազորված Անձանց կողմից (նիստից բացակայող Լիազորված Անձի կամ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվող Լիազորված Անձի մասով վերապահումով):

Այն դեպքում, երբ Լիազորված Անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, Գնահատող Հանձնաժողովը պետք է այդ հրաժարման փաստն արտացոլի արձանագրության մեջ: Որակավորման Հայտերի բացման նիստին Լիազորված Անձի բացակայությունը կամ նիստի արձանագրությունը ստորագրելուց Լիազորված Անձի հրաժարումը չպետք է ազդեցություն ունենա որևէ նման նիստի կամ արձանագրության վավերականության վրա:

Որակավորման Հայտերի բացման նիստի արդյունքների հիման վրա Գնահատող Հանձնաժողովը կարող է պահանջել շտկել Որակավորման Հայտերում անհամապատասխանությունները Հոդված 6.5-ի համաձայն (Հոդված 4.4-ի համաձայն Որակավորման Հայտերի բացման սահմաններում)՝ արտացոլելով որևէ նման որոշումն արձանագրությամբ:

4.4.5. Որակավորման Հայտերի բացման նիստի ավարտից հետո Գնահատող Հանձնաժողովը պետք է անցնի Որակավորման Հայտերի գնահատմանը՝ համաձայն սույն ՈՀ-ի:

Որակավորման Հայտերի բացման նիստին բացված բոլոր Որակավորման Հայտերը պետք է Գնահատող Հանձնաժողովի կողմից պահպանվեն և չպետք է վերադարձվեն Թեկնածուներին:

5. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ: ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ

5.1. Որակավորման Հայտերի հետ կապված հարցումների ընթացակարգը

5.1.1. Ընտրության Ընթացակարգին մասնակցելու նախաձեռնություն ունեցող ցանկացած Թեկնածու, ինչպես նաև՝ ցանկացած Թեկնածու իրավասու է Գնահատող Հանձնաժողովին ուղղել հարցում Որակավորման Հայտերի հետ կապված լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների համար Հայտարարության հրապարակման օրվանից սկսած մինչև Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետը (ստորև Հոդված 5.1.4.-ի դրույթների պատշաճ պահպանմամբ): Հարցումը կարող է ներկայացվել՝

- (a) Առձեռն՝ Տեղեկատվական Թերթիկում Գնահատող Հանձնաժողովի նշված հասցեին և աշխատանքային օրացույցին համապատասխան
- (b) Էլեկտրոնային փոստով՝ Տեղեկատվական Թերթիկում նշված Գնահատող Հանձնաժողովի էլեկտրոնային փոստին
- (c) ARMEPS-ի միջոցով սույն ՈՀ-ի նպատակներով Որակավորման Հայտերին առնչվող պահանջների ներկայացման համար ARMEPS-ի ֆունկցիոնալությանը համապատասխան:

Եթե հարցումը ներկայացվում է առձեռն, հարցումը ներկայացնող անձը պետք է ունենա բնօրինակ նույնականացման փաստաթղթեր և Լիազորող Փաստաթղթերի պատճենները (Թեկնածուների դեպքում) նման հարցում ներկայացնելու նպատակով:

5.1.2. Որակավորման Հայտերի հետ կապված լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների շուրջ հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- (a) Հարցում ներկայացնող անձի (ապագա Թեկնածու կամ Թեկնածու) լրիվ անվանումը, գրանցման և կոնտակտային տվյալները,
- (b) Հղում Հայտարարությանը և Որակավորման Հարցմանը,
- (c) Հստակ ձևակերպված հարցում՝ Որակավորման Հայտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կամ պարզաբանումներ տրամադրելու,
- (d) Հարցման ամսաթիվը:

5.1.3. Գնահատող Հանձնաժողովը պետք է տրամադրի տեղեկատվություն կամ պարզաբանումներ հարցմանն ի պատասխան այն հերթականությամբ, որով դրանք ստացվել են, առնվազն յուրաքանչյուր հարցման ստացման ամսաթվից հաշված հինգ (5) աշխատանքային օրերի ընթացքում և ոչ ավել, քան քսան (20) աշխատանքային օրը: Սույն Հոդված 5.1-ի շրջանակներում տեղեկատվության հարցման/պարզաբանումների ստացման վերաբերյալ Գնահատող Հանձնաժողովի բոլոր պատասխանները պետք է լինեն հանրային հասանելի և հրապարակվեն Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում և ARMEPS-ում ապանձնավորված տեսքով, այսինքն՝ այնպես, որ Թեկնածուների կամ հարցումներ ներկայացրած այլ անձանց մասին որևէ տեղեկություն նույնականացնել հնարավոր չլինի:

Գնահատող Հանձնաժողովը պետք է ի պատասխան հարցումներին ապահովի տեղեկատվություն կամ պարզաբանումներ բացառապես այն ծավալով, որը պահանջվում է սույն ՈՀ-ի ներքո Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման համար: Գնահատող Հանձնաժողովը

կարող է համախմբված պատասխան տրամադրել մի քանի նման կամ նույնական (կրկնվող) հարցումներին:

Հայտերին վերաբերող հարցումների իրականացման և հասցեագրման ընթացակարգը սահմանվում է Առաջարկի Հրավերում, որը նախատեսված է սույն ՈՒՀ-ի համաձայն մրցութային գործընթացին մասնակցելու համար որակավորված Թեկնածուների համար:

5.1.4. Գնահատող Հանձնաժողովին իրավունք է վերապահվում չպատասխանել որոշակի հարցումների, մասնավորապես՝ նրանց, որոնք չեն համապատասխանում Հոդվածներ 5.1.1-ի և 5.1.2-ի պահանջներին, ներկայացվել են Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից հետո կամ եթե Գնահատող Հանձնաժողովը չունի բավարար ժամանակ պատասխանելու նման հարցումներին Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետն ավարտվելու հետ կապված:

5.2. Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստերը

5.2.1. Գնահատող Հանձնաժողովը կարող է անցկացնել բաց նիստեր՝ հնարավոր Թեկնածուների կամ Թեկնածուների հարցերը Որակավորման Հայտերի պատրաստման ու ներկայացման հետ կապված հարցերը քննարկելու և պարզաբանելու նպատակով: Առաջին բաց նիստը պետք է անցկացվի Հայտարարության հրապարակման օրվանից հետո ոչ ուշ, քան տասներորդ (10-րդ) աշխատանքային օրը: Գնահատող Հանձնաժողովը կարող է իրականացնել հետագա բաց նիստերը Որակավորման Հատերի Ներկայացման Վերջնաժամկետի շրջանակներում Կողմնորոշիչ ժամանակացույցում տրված ժամկետների համարժեք: Գնահատող Հանձնաժողովը չպետք է սահմանափակված լինի Կողմնորոշիչ ժամանակացույցում նշված Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստերի օրացույցով և կարող է անցկացնել նման նիստեր ԱՀ-ի փուլում Ընտրության Ընթացակարգի անցկացման նպատակներից ելնելով:

Գնահատող Հանձնաժողովը պետք է հրապարակի Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստերի վերաբերյալ հայտարարությունը Էլեկտրոնային նախարարության պաշտոնական կայքում կամ ARMEPS-ի միջոցով այդ նիստի պլանավորված օրվանից առնվազն չորս (4) օր առաջ: Հայտարարությունը պետք է առանցքային մանրամասներ պարունակի յուրաքանչյուր նիստի վերաբերյալ, որը որոշվում է Գնահատող Հանձնաժողովի կողմից, ներառյալ՝ նիստի պլանավորված օրը, ժամը, ձևաչափը (առցանց/անցանց) և վայրը/մուտքի տվյալները:

5.2.2. Հնարավոր Թեկնածուները և Թեկնածուները պետք է կարողանանա մասնակցել բաց նիստերին, ինչի մասին պետք է նախապես գրավոր ծանուցեն Գնահատող Հանձնաժողովին նիստի անցկացման պլանավորված օրվանից երկու (2) օրվա ընթացքում: Այդ ծանուցումը պետք է պարունակի հարցում բաց նիստին մասնակցության և նիստի ընթացքում Որակավորման Հայտերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների վերաբերյալ, որոնք հնարավոր թեկնածուները կամ Թեկնածուները կցանկանան հասցեագրել նիստի շրջանակներում: Բաց նիստին մասնակցության ծանուցումը պետք է պատրաստվի և ներկայացվի Հոդվածներ 5.1.1-5.1.2-ի համաձայն՝ ենթակա հետևյալ փոփոխությունների՝

- (a) Ծանուցումը չպետք է ներկայացվի ARMEPS-ի միջոցով,
- (b) Ծանուցումը պետք է լրացուցիչ պարունակի (i) բաց նիստին մասնակցելու ցանկություն ունեցող (առավելագույնը մինչև հինգ (5) անձանց) անկը (հնրավոր Թեկնածուի ներկայացուցիչներ կան Թեկնածուների Լիազորված Անձինք) և (ii) բաց նիստին մասնակցելու համար ներկայացված անձանց նույնականացման փաստաթղթերի պատճենները:

5.2.3. Հնարավոր Թեկնածուներին և Թեկնածուներին ներկայացնող և բաց անցանց նիստին մասնակցող անձինք պետք է ունենան բնօրինակ նույնականացման փաստաթղթերը և Լիազորող Փաստաթղթերի պատճենները (Թեկնածուների դեպքում) Գնահատող Հանձնաժողովի գործունեության վայր մուտքի և նիստին մասնակցության համար: Այդ անձինք պետք է ստորագրեն Գնահատող Հանձնաժողովի գրանցամատյանը՝ փաստելով իրենց հաճախումը: Եթե այդ անձինք չեն մասնակցում նիստին, Գնահատող Հանձնաժողովը շարունակում է իրականացնել նիստը առանց նրանց և այդ անձանց բացակայությունն արտացոլում է արձանագրության մեջ:

Հավանական Թեկնածուներին կամ Թեկնածուներին ներկայացնող որևէ անձի բացակայությունը Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստին չպետք է ազդեցություն ունենա որևէ նման նիստի իրավազորության վրա:

5.2.4. Բաց նիստերը պետք է բացառապես նվիրված լինեն Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված հարցերի քննարկմանը՝ հավանական Թեկնածուներին կամ Թեկնածուներին կողմից նախապես լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների մասին ներկայացված հարցման հիման վրա, որ վերջիններս ներկայացրել են ըստ Հոդված 5.2.2-ի: Գնահատող Հանձնաժողովը կարող է հետագայում հստակեցնել բաց նիստերի ընթացակարգային մանրամասները (ինչպիսիք են օրակարգը, քննարկման ընթացակարգը և նիստերի ժամանակացույցը) հնարավոր Թեկնածուների և Թեկնածուների ներկայացուցիչների համար այդ նիստերի հայտարարության մեջ և/կամ նիստի բացման հատվածում:

5.2.5. Գնահատող Հանձնաժողովը պետք է իրականացնի և փաստաթղթավորի Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստերի արդյունքները ՊՄԳ Ընթացակարգի պահանջների և պայմանների և Գնահատող Հանձնաժողովի ընթացակարգային կանոնների համաձայն: Բաց նիստի արձանագրությունը չպետք է ստորագրվի հավանական Թեկնածուների և Թեկնածուների՝ նիստին մասնակից ներկայացուցիչների կողմից:

Գնահատող Հանձնաժողովը պետք է հետագայում հրապարակի Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված՝ բաց նիստի ընթացքում քննարկված և պարզաբանված հարցերի համախմբված պատասխանները Էլեկտրոնային նախարարության պաշտոնական կայքում կամ ARMEPS-ում այդ նիստին հաջորդող երկու (2) աշխատանքային օրերի ընթացքում (պատասխանները պետք է լինեն ապանձնավորված, այսինքն՝ չպետք է հնարավոր լինի նույնականացնել որևէ տեղեկատվություն Թեկնածուներին կամ հարցում ներկայացրած այլ անձանց վերաբերյալ):

5.3. Որակավորման Հայտերում փոփոխությունները

5.3.1. Թեկնածուները կարող են փոփոխություններ իրականացնել Որակավորման Հայտում Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից առաջ: Տարընկալումներից խուսափելու համար՝ Որակավորման Հայտում որևէ փոփոխություն չի կարող թույլատրվել Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետն ավարտվելուց հետո:

5.3.2. Որակավորման Հայտում փոփոխությունները կարող են ծածկել ողջ Որակավորման Հայտը կամ Որակավորման Հայտի որոշ մասերը կամ այն կազմող փաստաթղթերը՝ համաձայն *Հավելված 6-ում (Որակավորման Հայտի Բովանդակությունը)* տրված կառուցվածքի և կարող է ներառել փոփոխություններ (ձևափոխություններ) և լրացումներ (համալրումներ) Որակավորման Հայտում:

Թղթային Որակավորման Հայտերում փոփոխությունները պետք է պատրաստվեն և ներկայացվեն ՊՄԳ Ընթացակարգի պարագրաֆ 86-ի և հետևյալ պահանջների համաձայն՝

(a) Թեկնածուն պետք է թղթային Որակավորման հայտի փոփոխությունների բնօրինակը և պատճենները Հոդված 3.1-ի պահանջների համաձայն՝ հստակ նշագրելով փոփոխությունների տեսակը («ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ», «ԼՐԱՑՈՒՄ») ըստ իրավիճակի յուրաքանչյուր բովանդակային միավորի հետ կապված: Թեկնածուն նաև պետք է Որակավորման Հայտի բոլոր փոփոխությունները ամփոփի համեմատական աղյուսակի տեսքով, որի օրիգինալը և պատճենները պետք է պատրաստվեն որպես Որակավորման Հայտի փոփոխությունների օրիգինալի և ատճենների մաս և ներառվեն Հայտի փոփոխությունների ծրար(ներ)ում կամ փոստայի արկղում, ինչպես նշվում է ստորև՝ կետ (b)-ում:

(b) Թեկնածուն պետք է Որակավորման Հայտի փոփոխությունները տեղադրի ծրար(ներ)ում կամ փոստային արկղում, ինչը պետք է պատրաստվի Հոդված 3.2-ի պահանջների համաձայն և հստակ նշագրվի փոփոխության տեսակը («ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ», «ԼՐԱՑՈՒՄ») իրավիճակից կախված:

(c) Լիազորված Անձը պետք է համաձայնի ներկայացման օրվա և ժամի հետ կապված և պետք է ներկայացնի Որակավորման Հայտում փոփոխությունները Գնահատող Հանձնաժողովի քարտուղարին Հոդվածներ 4.2-4.3-ում սահմանված կարգով՝ Հոդված 5.3-ում սահմանված փոփոխությունների հաշվի առնմամբ: Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը պետք է Լիազորված Անձանց տրամադրի Որակավորման Հայտում փոփոխությանը գրավոր հաստատման թերթիկ:

5.3.3. ARMEPS-ի միջոցով ներկայացման համար նախատեսված Որակավորման Հայտում փոփոխությունների ներկայացման համար Թեկնածուն պետք է հանի իր Որակավորման Հայտը և ներկայացնի վերանայված (փոփոխված) Որակավորման Հայտը ARMEPS-ի միջոցով (ներառյալ՝ նման Որակավորման Հայտի վերանայված (փոփոխված) հավելյալ պատճենը գաղտնագրված էլեկտրոնային փոստով)՝ սույն ՈՀ-ի պահանջներին համապատասխան:

Թեկնածուներին խորհուրդ է տրվում իրենց Որակավորման Հայտերում փոփոխություններ իրականացնել ժամանակային տեսանկյունից խելամիտ կերպով՝ նախքան Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետը լրանալը: Թեկնածուներ պետք է կրեն իրենց Որակավորման Հայտերում փոփոխություններ կատարելու հետ կապված ժամանակի ոչ պատշաճ պլանավորման համար, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ նման փոփոխությունները պլանավորված են Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկտի ավարտին անխուսափելիորեն մոտ ժամկետի համար, ինչը հնարավոր չի դաձնում Որակավորման Հայտերում փոփոխությունների ներկայացման և հաստատման հետ կապված բոլոր անհրաժեշտ կարգավորումների ապահովումը՝ համաձայն սույն ՈՀ-ի:

5.3.4. Որակավորման Հայտերում փոփոխություններ կատարելու՝ սույնով ամրագրված պահանջների խախտումը պետք է հիմք ծառայի սույն ՈՀ-ի համաձայն Որակավորման Հայտի մերժման համար:

5.4. Որակավորման Հայտերի չեղարկումը

5.4.1. Թեկնածուն կարող է չեղարկել իր Որակավորման Հայտը Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետից առաջ: Թղթային Որակավորման հայտի չեղարկումը պետք է իրականացվի ՊՄԳ Ընթացակարգի պարագրաֆի 86-ի և հետևյալ պահանջների համաձայն՝

(a) Թեկնածուն պետք է պատրաստի գրավոր ծանուցում Որակավորման Հայտի չեղարկման վերաբերյալ: Ծանուցումը պետք է անդրադառնա Թեկնածուի Որակավորման Հայտին և հստակ նշագրվի՝ որպես «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ», ինչպես նաև՝ նշի համապատասխան Թեկնածուի լրիվ անունն ու կնիստակտային տվյալները:

(b) Լիազորված Անձը պետք է համաձայնի ներկայացման օրվա և ժամի վերաբերյալ և ներկայացնի Որակավորման Հայտի չեղարկման ծանուցումը Գնահատող Հանձնաժողովի քարտուղարին Հոդվածներ 4.2-4.3-ում նշված կարգով՝ հաշվի առնելով Հոդված 5.4-ում անհրաժեշտ փոփոխությունները: Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը պետք է տրամադրի Լիազորված Անձին Որակավորման Հայտի չեղարկման ծանուցումը ստանալու վերաբերյալ գրավոր հաստատում և վերադարձնի Որակավորման Հայտի չբացված ծրար(ներ)ը կամ փոստային արկղը Լիազորված Անձին:

5.4.2. ARMEPS-ի միջոցով ներկայացման համար նախատեսված Որակավորման Հայտի չեղարկումը պետք է իրականացվի հետևյալ պահանջներին համահունչ՝

(a) Թեկնածուն պետք է պատրաստի և ներկայացնի Գնահատող Հանձնաժողովին իր Որակավորման Հայտը չեղարկելու մասին էլեկտրոնային ծանուցում: Ծանուցումը պետք է անդրադառնա ARMEPS-ում ներկայացված Որակավորման Հայտին և սույն ՈՀ-ի պահանջներին համարժեք ներկայացված՝ Որակավորման Հայտի հավելյալ գաղտնագրված պատճենին, պետք է հստակորեն նշագրվի՝ որպես «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ», ինչպես նաև՝ նշի համապատասխան Թեկնածուի ամբողջական անունը և կոնտակտային տվյալները:

(b) Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը պետք է Թեկնածուի Լիազորված Անձին տրամադրի Որակավորման Հայտի չեղարկման ծանուցումը ստանալու մասին էլեկտրոնային

փոստով հաստատում՝ նշելով, որ Թեկնածուի՝ համարժեք գաղտանգրված էլեկտրոնային փոստի Որակավորման Հայտի հավելյալ պատճենը համարվում է չեղարկված:

- (c) Թեկնածուն այնուհետև չեղարկում է իր Որակավորման Հայտի բնօրինակը ARMEPS-ում՝ հետևելով ARMEPS-ի Ձեռնարկին և ARMEPS-ի ֆունկցիոնալության պահանջներին:

5.4.3. Իր Որակավորման Հայտը չեղարկած Թեկնածուն կարող է ներայացնել մեկ այլ Որակավորման Հայտ (կամ Հոդված 5.3.3 նպատակներով ARMEPS-ի միջոցով ներկայացնելու համար Որակավորման Հայտի փոփոխություններ) Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետը լրանալուց առաջ՝ սույն ՈՀ-ի պահանջներին համաձայն:

5.4.4. Թեկնածուներին խորհուրդ է տրվում չեղարկել իրենց Որակավորման Հայտերը ժամանակային տեսանկյունից խելամիտ կերպով՝ նախքան Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետը: Թեկնածուները կրում են Որակավորման Հայտերի չեղարկման ժամանակի ոչ պատշաճ պլանավորման հետ կապված ամբողջ ռիսկերը, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ նման չեղարկումը պլանավորված է Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետի ավարտին անխուսափելիորեն մոտ ժամկետի համար, ինչը հնարավոր չի դաձնում Որակավորման Հայտի չեղարկման ծանուցման ներկայացման և հաստատման հետ կապված բոլոր անհրաժեշտ կարգավորումների ապահովումը՝ համաձայն սույն ՈՀ-ի:

6. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6.1. Որակավորման Հայտերի գնահատման վերջնաժամկետը

6.1.1. Գնահատող Հանձնաժողովը պետք է գնահատի Որակավորման Հայտերը և որոշում կայացնի որակավորված Թեկնածուների ցանկի վերաբերյալ սույն ՈՀ-ի համաձայն Հոդված 4.4-ի ներքո իրականացված Որակավորման Հայտերի բացման նիստից հետ երեսուն (30) օրվա ընթացքում («Որակավորման Հայտերի Գնահատման Վերջնաժամկետ»):

6.2. Որակավորման Հայտերի գնահատման ընթացակարգը

6.2.1. Գնահատող Հանձնաժողովը պետք է անցկացնի Որակավորման Հայտերի գնահատման նիստեր կամ հանդիպումներ իր ընթացակարգային կանոնների և աշխատանքային ժամանակացույցի համապատասխան, սակայն անպայմանորեն Որակավորման Հայտերի Գնահատման Վերջնաժամկետի շրջանակներում:

6.2.2. Գնահատման նիստերը կամ հանդիպումները պետք է ներառեն յուրաքանչյուր Որակավորման հայտի մանրամասն գնահատում՝ որոշելու՝ արդյոք Որակավորման Հայտը համապատասխանում է Հայտատուների ցանկի նկատմամբ ներկայացվող ընդհանուր պահանջներին՝ ըստ **Error! Reference source not found.-ի** (*Հայտարարության նկարագրի Ընդհանուր Պահանջներ*) և բավարարում է Որակավորման Պահանջներին՝ ըստ *Հավելված 5-ի* (*Որակավորման Չափանիշներ*): Գնահատող Հանձնաժողովը բացում է Որակավորման Հայտերը (համաձայն Հոդված 4.4.-ի) և ամփոփում է Որակավորման Հայտերի գնահատման արդյունքները Գնահատող Հանձնաժողովի նիստի ժամանակ, որը պետք է լինի բաց Թեկնածուների և նրանց Լիազորված Անձանց մասնակցության համար: Գնահատման Հանձնաժողովի՝ Որակավորման Հայտերի գնահատման նիստերը կամ հանդիպումները, ինչպես նաև նման հարցերի վերաբերյալ Խորհրդատուների հետ խորհրդատվությունները կարող են անցկացվել փակ: Տարընկալումներից խուսափելու նպատակով՝ նման հանդիպումները, նիստերը և խորհրդատվությունները չպետք է համարվեն Գնահատող Հանձնաժողովի նիստ սույն ՈՀ-ի նպատակներով և չպետք է բաց լինեն Թեկնածուների և/կամ նրանց Լիազորված Անձանց մասնակցության համար:

6.2.3. Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների հիման վրա և հաշվի առնելով ստորև Հոդվածներ 6.4-6.6-ի պահանջներն ու պայմանները՝ Գնահատող Հանձնաժողովը պետք է ներկայացնի իր եզրակացությունը Որակավորման Հայտը բավարար կամ ոչ բավարար լինելու վերաբերյալ:

Որակավորման Հայտը, որը համապատասխանում է **Error! Reference source not found.**-ում (Հայտարարուներին ներկայացվող Ընդհանուր Պահանջներ) նշված Հայտատուների ցանկի նկատմամբ պահանջներին և Հավելված 5-ում (Որակավորմա Չափանիշներ) նշված Որակավորման Չափորոշիչներին, պետք է Գնահատող Հանձնաժողովի կողմից ճանաչվի բավարար:

Որակավորման Հայտը, որը չի համապատասխանում **Error! Reference source not found.**-ում (Հայտարարուներին ներկայացվող Ընդհանուր Պահանջներ) նշված Հայտատուների ցանկի նկատմամբ պահանջներին և/կամ Հավելված 5-ում (Որակավորմա Չափանիշներ) նշված Որակավորման Չափորոշիչներին, պետք է Գնահատող Հանձնաժողովի կողմից ճանաչվի ոչ բավարար:

Տարընկալումներից խուսափելու համար՝ Գնահատող Հանձնաժողովը կարող է եզրակացնել, որ Որակավորման Հայտը ոչ բավարար է, և Թեկնածուն կարող է մերժվել՝ Առաջարկի Հրավերի փուլում մրցութային ընթացակարգին մասնակցելու, եթե Որակավորման Հայտի գնահատումը ցույց է տալիս, որ՝

- (a) Որակավորման Հայտը չի ներառում սույն ՈՀ-ով պահանջվող փաստաթղթերը կամ տեղեկատվությունը կամ նման փաստաթղթերը և/կամ տեղեկատվություն ամբողջական չեն (մասնավորապես՝ Որակավորման Հայտի վերաբերյալ Հոդվածներ 6.4-6.2.5-ի ներքո հարցված պարզաբանումների/շտկումների շրջանակներում),
- (b) Որակավորման Հակտը պարունակում է կեղծ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր,
- (c) Որակավորման Հայտը պարունակում է տեղեկատվություն կամ փաստաթղթեր Թեկնածուի հայտի (մասնավորապես՝ գնային առաջարկներ) վերաբերյալ կամ պարունակում է ոչ անրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթերի մասեր, որոնք առաջացնում են Նյութական Շեղումներ,
- (d) **Error! Reference source not found.**-ով (Ընդհանուր Պահանջներ Հայտարարուների նկատմամբ) Հայտատուների նկատմամբ սահմանված ընդհանուր պահանջները, Հավելված 5-ով (Որակավորման Չափանիշներ) սահմանված Որակավորման Չափորոշիչները կամ Թեկնածուների, Կոնսորցիումի Անդամների կամ դրանց Փոխկապակցված Ընկերությունների վերաբերյալ սույն ՈՀ-ով սահմանված այլ պահանջները (ներառյալ՝ Հոդվածներ 2.2.54–2.2.2.6-ով և 2.3-ով սահմանվածները, եթե կիրառելի են) բավարաված չեն,
- (e) Առկա են սույն ՈՀ-ով կամ Կիրառելի Օրենքով սահմանված՝ այլ ակնհայտ հիմքեր Որակավորման Հայտի մերժման համար:

6.2.4. Գնահատող Հանձնաժողովը պետք է փաստաթղթավորի յուրաքանչյուր Որակավորման Հայտի գնահատումը ՊՄԳ Ընթացակարգի և Գնահատող Հանձնաժողովի աշխատակարգով սահմանված պահանջների համապատասխան: Գնահատման արդյունքները պետք է հայտարարվեն Գնահատող Հանձնաժողովի՝ գնահատման արդյունքների ամփոփման նիստի ժամանակ (որն անցկացվում է համաձայն Տեղեկատվական Թերթիկի):

6.3. Գնահատման գաղտնիությունը

6.3.1. Որակավորման Հայտերի գնահատման հետ կապված տեղեկատվությունը չպետք է բացահայտվի Թեկնածուներին կամ որևէ այլ անձանց, որոնք պաշտոնապես կապված չեն գնահատման գործընթացի հետ՝ մինչև որակավորված Թեկնածուների ցանկի հրապարակումը (համաձայն Հոդված 6.2.4-ի) և Թեկնածուներին Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ ծանուցումների ներկայացումը (համաձայն Հոդված 6.7-ի):

6.3.2. Թեկնածուի կողմից Գնահատող Հանձնաժողովի կամ Իրավասու Մարմնի հետ բանակցելու կամ ազդեցություն ունենալու ցանկացած փորձ Որակավորման Հայտերի գնահատման գործընթացում կարող է հանգեցնել Որակավորման Հայտի մերժման:

6.4. Որակավորման հայտերի պարզաբանումը

6.4.1. Որակավորման Հայտերի գնահատման վերջնաժամկետի ընթացքում Գնահատող Հանձնաժողովը կարող է Թեկնածուից պահանջել Թեկնածուի Որակավորման Հայտի

առնչությամբ բովանդակային հարցերի շուրջ պարզաբանումներ (ըստ Հոդված 6.5-ի՝ Որակավորման Հայտերի անհամապատասխանություններից զատ) սույն ՈՀ-ի համաձայն դրա ամբողջականությունը կամ համապատասխանությունը որոշելու կամ Որակավորման Հայտը գնահատելու նպատակով:

6.4.2. Գնահատող Հանձնաժողովը պետք է պարզաբանման հարցումն ուղարկի Հոդված 5.1.1-ի (a)-(b) կետերում սահմանված կարգով, սակայն՝ Հոդված 6.7-ի համաձայն որակավորված Թեկնածուների ցանկի հաստատմանն ընդառաջ: Թեկնածուն պետք է տրամադրի պահանջված տեղեկատվությունը Գնահատող Հանձնաժողովին Հոդված 5.1.1-ի (a)-(b) կետերում սահմանված կարգով պարզաբանման հարցումը ստանալու օրվանից հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

6.4.3. Սույն Հոդված 6.4-ի իմաստով պարզաբանման հարցմանն ի պատասխան Թեկնածուի կողմից տեղեկատվության չտրամադրումը կարող է հանգեցնել Որակավորման Հայտի մերժմանը:

Որակավորման Հայտում որևէ փոփոխություն (ներառյալ՝ Որակավորման Հայտը կազմող փաստաթղթերի լրացում, հեռացում, փոխարինում, վերաներկայացում) չի կարող պահանջվել, առաջարկվել կամ թույլատրվել ըստ Հոդված 6.4-ի Որակավորման Հայտերի պարզաբանման հետ կապված:

6.5. Որակավորման Հայտերում փոքր անհամապատասխանությունները

6.5.1. Գնահատող Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության կարող է նախաձեռնել ՊՄԳ Ընթացակարգի 97-98 պարագրաֆներով հաստատված շտկումների ընթացակարգով Որակավորման Հայտերում Անհամապատասխանությունները հասցեագրելու նպատակով Որակավորման Հայտերի բացման կամ գնահատման փուլերում: Գնահատող Հանձնաժողովը պետք է այս մասին համարժեք ծանուցում ուղարկի Թեկնածուին Հոդված 5.1.1-ի (a)-(b) կետերում սահմանված կարգով, սակայն՝ նախքան Հոդված 6.7-ի համաձայն որակավորված Թեկնածուների ցանկի հաստատումը:

6.5.2. Որակավորման Հայտի ոչ մի փոփոխություն (ներառյալ՝ Որակավորման Հայտը կազմող փաստաթղթերի լրացում, հեռացում, փոխարինում, վերաներկայացում) չպետք է պահանջվի, առաջարկվի կամ թույլատրվի, Որակավորման Հայտերի Փոքր Անհամապատասխանությունների անտեսման կամ վերացման հետ կապված սույն Հոդված 6.55-ի իմաստով:

6.6. Որակավորման Հայտերի հետ կապված երրորդ անձանց հարցումները

6.6.1. Գնահատող Հանձնաժողովը կարող է կապ հաստատել ցանկացած պետական, ինքնակառավարման մարմնի, ֆինանսական հաստատության կամ որևէ այլ միավորի կամ անձի հետ (ըստ անհրաժեշտության) Որակավորման Հայտում պարունակված տեղեկատվության և/կամ փաստաթղթերի ճշգրտությունը հավաստելու հարցմամբ կամ հստակեցնելու Որակավորման Հայտի ամբողջականությունն ու համապատասխանությունը սահմանելու կամ գնահատելու հետ կապված հանգամանքները:

6.6.2. Եթե հարցումը հանգեցնում է սույն ՈՀ-ով սահմանված պահանջների հետ (մասնավորապես՝ Հոդված 6.2.3-ի սահմանված կարգով) Որակավորման Հարցման համապատասխանության կամ Թեկնածուի համարժեքության հետ կապված հակասող արդյունքների, սա կարող է հիմք ծառայել Որակավորման Հայտի մերժման համար:

6.7. Որակավորման ցանկ

6.7.1. Հենց Որակավորման Հայտերի գնահատումն ավարտվում է սույն Որակավորման Հարցման համաձայն, Գնահատող Հանձնաժողովը պատրաստում և հաստատում է Թեկնածուների ցանկը, որոնք որակավորվում են Առաջարկի Հրավերի փուլում մրցութային ընթացակարգին մասնակցելու համար («**Որակավորման ցանկ**»): Գնահատող Հանձնաժողովը պետք է հաստատի Որակավորման Ցանկը փակ նիստում իր ընթացակարգային կանոնների և

ժամանակացույցի համապատասխան, սակայն Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից առաջ:

- 6.7.2. Գնահատող Հանձնաժողովը պետք է հրապարակի Որակավորման ցանկը Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում Որակավորման Ցանկի հաստատման օրվանից հետո հինգ (5) աշխատանքյաին օրվա ընթացքում:

7. ԱՌԱՋԱՐԿԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՒԼԻՆ ԱՆՅՈՒՄԸ

7.1. Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների ծանուցումը

- 7.1.1. Որակավորման Ցանկի հրապարակման օրվանից հետո երկու (2) աշխատանքյաին օրվա ընթացքում Գնահատող Հանձնաժողովը պետք է Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ ծանուցումներն ուղարկի Թեկնածուներին, մասնավորապես՝
- (a) Առաջարկի Հայտերի փուլում մրցութային գործընթացին Թեկնածուների մասնակցության մերժման վերաբերյալ ծանուցումներ, ներառյալ՝ մերժման հիմքերի բովանդակային ներկայացումը, կամ
 - (b) Առաջարկի Հայտերի փուլում մրցութային գործընթացին Թեկնածուներին որակավորման վերաբերյալ ծանուցումները, ներառյալ՝ Առաջարկի Հայտերի փուլում մրցութային գործընթացին մասնակցության վերաբերյալ հենքային տեղեկատվությունը (մասնավորապես՝ բաց նախամրցութային նիստերի մասին տեղեկատվությունը):
- 7.1.2. Գնահատող Հանձնաժողովը պետք է Հոդված 7.1-ում նշված ծանուցումներն ուղարկի Հոդված 5.1.1-ի (a)-(b) կետերում նշված Լիազորված Անձանց:

7.2. Գաղտնիության Նախաձեռնության ստորագրումը

- 7.2.1. Հոդված 7.1-ի համաձայն մրցութային գործընթացին մասնակցության որակավորման վերաբերյալ ծանուցումներին զուգահեռ որակավորված Թեկնածուն պետք է ստանա Զբացահայտման Համաձայնագրի երկու (2) պատճե: Զբացահայտման Համաձայնագրի պահանջներին համապատասխան Ծրագրի վերաբերյալ կոնֆիդենցիալ տեղեկատվությանը հասանելիություն ունենալու համար բոլոր որակավորված Թեկնածուները պետք է՝
- (a) Լրացնեն պահանջվող տվյալները Գաղտնիության Նախաձեռնության երկու (2) պատճեներում
 - (b) Համակարգեն ներկայացման օրն ու ժամը և ներկայացնեն ստորագրված Գաղտնիության Նախաձեռնությունը Գնահատող Հանձնաժողովի քարտուղարին Լիազորված Անձանց միջոցով (ինչպես նշվում է Հոդվածներ 4.2-4.3-ում), որոնք ենթակա են անհրաժեշտ փոփոխությունների Հոդված 7.2-ի ներքո:

Ներկայացված Գաղտնիության Նախաձեռնությունը ստանալուց հետո Գնահատող Հանձնաժողովի քարտուղարը պետք է գրավոր հաստատում ներկայացնի Լիազորված Անձին այն ստանալու վերաբերյալ:

- 7.2.2. Իրավասու Մարմինը պետք է ոչ ուշ քան որակավորված Թեկնածուի կողմից Գաղտնիության Նախաձեռնության պատճեները ստանալուց հետո մեկ (1) աշխատանքյաին օրվա ընթացքում ուղարկի Լիազորված Անձին Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի միջոցով հետևյալը՝
- (a) Ծրագրին առնչվող գաղտնի տվյալներին հասանելիությունը հավաստելու մասին ծանուցումը, ներառյալ գաղտնի տեղեկատվության հասանելիության համար անհրաժեշտ մանրամասները,
 - (b) Ծրագրին առնչվող գաղտնի տվյալներին հասանելիություն շնորհելը մերժելու ծանուցումը, հրաժարման բովանդակային հիմնավորման հետ միասին, և վերանայված Գաղտնիության Նախաձեռնության ստորագրված տարբերակը ստանալու ակնկալվող պայմանների նշումով՝ անհրաժեշտ ճշգրտումներով, եթե որակավորված Թեկնածուի կողմից ուղարկված օրինակները չեն համապատասխանում Հավելված 7-ում (Գաղտնիության Նախաձեռնության Ձև) սահմանված Գաղտնիության Նախաձեռնության պահանջներին:

Որակավորված Թեկնածուն պետք է լավագույն ջանքը գործադրի Գաղտնիության Նախաձեռնության վերանայված տարբերակն անհրաժեշտ ճշգրտումներով ամենակարճ ժամանակահատվածում ուղարկելու համար Իրավասու Մարմնից վերը նշված Հոդված 7.2.2-ի կետ (b)-ում նշված ծանուցումը ստանալուց հետո՝ Հոդված 7.2.1-ում սահմանված ընթացակարգերի համապատասխան: Գաղտնիության Նախաձեռնության վերանայված տարբերակը ստանալուց հետո Իրավասու Մարմինը կարող է ուղարկել Հոդված 7.2.2-ի կետեր (a)-ում և (b)-ում նշված ծանուցումներից որևէ մեկը Լիազորված Անձին Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի միջոցով:

Սույն Հոդված 7.2.2-ի կետեր (a)-ում և (b)-ում նշված ծանուցումները և փաստաթղթերը պետք է ուղարկվեն Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում սահմանված կարգով:

7.2.3. Սույն Հոդված 7.2-ի շրջանակներում Գաղտնիության Նախաձեռնության ստորագրման ու ներկայացման ընադիանուր ժամանակահատվածը չպետք է գերազանցի Որակավորման ցանկը հրապարակելու օրվանից հետո յոթ (7) աշխատանքային օրը:

7.3. Մրցութային գործընթացին վերաբերող նախապատրաստական գործողություններ

7.3.1. Գնահատող Հանձնաժողովը պետք է ոչ ուշ, քան Որակավորման Ցանկի հրապարակման ամսաթվից հետո տասներորդ (10-րդ) աշխատանքային օրը անցկացնի փակ հանդիպում նվիրված ԱՀ-ի փուլում մրցույթի ընթացակարգի նախապատրաստմանը: Այս նիստին Գնահատող Հանձնաժողովը՝

- (a) Հաստատում է բաց նախամրցութային նիստերի կողմնորոշիչ ժամանակացույցը, որոնք պետք է իրականացվեն համաձայն Հոդված 7.4-ի
- (b) Սահմանում է Առաջարկի Հրավերի հաստատման և հրապարակման նախնական ժամկետները՝ համաձայն Հոդված 7.5-ի դրույթների
- (c) Քննարկում է այլ հարցեր, որոնք կարող են վերաբերել Առաջարկի Հրավերի փուլին պատրաստվելու համար:

Գնահատող Հանձնաժողովը պետք է հրապարակի նիստի որոշ մանրամասներ, որոնք կարող են վերաբերել լինել որակավորված Թեկնածուներին Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

7.4. Բաց նախամրցութային նիստերը

7.4.1. Գնահատող Հանձնաժողովը կապահովի բաց նախամրցութային նիստ որակավորված Թեկնածուների հետ Առաջարկի Հրավերի փուլին արդյունավետ պատրաստվելու և անցման համար: Նախամրցութային նիստերը պետք է նվիրված լինեն ՊՄԳ Ծրագրի Նախագծի հետ կապված խնդիրների քննարկմանը, ներառյալ՝ ԱՀ-ի նախագծի և Համաձայնագրի նախագծի քննարկումը և ԱՀ-ի փուլում Ընտրության Ընթացակարգին մասնակցության հետ կապված հանգամանքների պարզաբանմանը: Փաստաթղթերը և տեղեկատվությունը, որոնք կարող են քննարկվել նախամրցութային նիստին, պետք է տրամադրվեն որակավորված Թեկնածուներին Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում նշված կարգով:

7.4.2. Առաջին նախամրցութային նիստը պետք է տեղօի ունենա Հոդված 7.3.1-ի համաձայն Գնահատող Հանձնաժողովի կողմից իրականացվող նախապատրաստական հանդիպման ժամկետից ոչ ուշ քան տասներկուերորդ (12-րդ) աշխատանքային օրը: Գնահատող Հանձնաժողովը պետք է իրականացնի հետագա նախամրցութային նիստերը մինչև ԱՀ-ի հաստատումը (ըստ Հոդված 7.5-ի)՝ համաձայն նման նիստերի կողմնորոշիչ ժամանակացույցի, որը տրամադրվել է որակավորված Թեկնածուներին Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում նշված կարգով: Գնահատող Հանձնաժողովը չպետք է սահմանափակված լինի նախամրցութային նիստերի կողմնորոշիչ ժամանակացույցով և կարող է սահմանել նիստեր, եթե դա անհրաժեշտ է և համարժեք ԱՀ-ի փուլի նպատակներին:

Գնահատող Հանձնաժողովը պետք է ներկայացնի նախամրցութային նիստի վերաբերյալ հայտարարությունը յուրաքանչյուր որակավորված Թեկնածուին Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում նշված կարգով առնվազն չորս (4) օր նախքան այդ նիստի պլանավորված օրը:

Հայտարարությունը պետք է պարունակի Գնահատող Հանձնաժողովի կողմից սահմանված յուրաքանչյուր նիստի վերաբերյալ հիմնական մանրամասները, ներառյալ՝ նիստի պլանավորված ամսաթիվը, ժամը, ձևաչափը (առցանց/անցանց) և վայրը/մուտքի տվյալները:

7.4.3. Որակավորված Թեկնածուները պետք է առաջադրվեն մասնակցելու նախամրցութային նիստին գրավոր ծանուցում ներկայացնելով Գնահատող Հանձնաժողովին նիստի պլանավորված ժամկետից երկու (2) օր առաջ: Այդ ծանուցումը պետք է պարունակի՝

- (a) Ծանուցումը ներկայացնող մասնակցի (որակավորված Թեկնածուի) ամբողջական անվանումը, այդ մասնակցի գրանցումը և կոնտակտային տվյալները²
- (b) Լիազորված Անձանց ցանկը (մինչև հինգ (5) անձ), ովքեր ցանկանում են մասնակցել նիստին և նման Լիազորված Անձանց նույնականացման փաստաթղթերի պատճենները²
- (c) ՊՄԳ Ծրագրի Նախագծի վերաբերյալ հարցեր և/կամ մեկնաբանություններ (ներառյալ՝ ԱՀ-ի և Համաձայնագրի նախագծերի վերաբերյալ), որոնք որակավորված Թեկնածուն ցանկանում է հասցեագրել նիստի ընթացքում²
- (d) Ծանուցման ամսաթիվը:

Լիազորված Անձը պետք է ներկայացնի մասնակցության ծանուցում Գնահատող Հանձնաժողովի նախամրցութային նիստին Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում սահմանված ձևով:

7.4.4. Լիազորված Անձինք պետք է ունենան նույնականացման բնօրինակ փաստաթղթեր և Լիազորող Փաստաթղթերի պատճենները Գնահատող Հանձնաժողովի աշխատանքային տարածք մուտք գործելու և նախամրցութային հանդիպմանն անցանց մասնակցելու նպատակով: Այս հանդիպմանը մասնակցող Լիազորված Անձինք պետք է ստորագրեն Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի գրանցամատյանը՝ փաստարկելով իրենց մասնակցությունը: Այն դեպքում, երբ Լիազորված Անձինք չեն կարողանում մասնակցել նախամրցութային հանդիպմանը, Գնահատող Հանձնաժողովը պետք է շարունակի ապահովել հանդիպումը առանց նրանց և պետք է արտացոլի այդ անձանց բացակայության փաստը արձանագրություններում:

Լիազորված Անձանց բացակայությունը նախամրցութային հանդիպմանը չի կարող ազդել նման հանդիպումների վավերականության վրա:

7.4.5. Գնահատող Հանձնաժողովը կարող է հստակեցնել Նախամրցութային նիստի ընթացակարգային մանրամասները (ինչպիսիք են օրակարգը, խորհրդակցության ընթացակարգը և հանդիպման ժամանակացույցը) Լիազորված Անձանց նման հանդիպման մասին հայտարարության մեջ և/կամ այդ հանդիպման բացման ընթացքում: Գնահատող Հանձնաժողովը չպետք է սահմանափակվի ՊՄԳ ծրագրի նախագծի վերաբերյալ նախամրցութային հանդիպումների ընթացքում որակավորված Թեկնածուների կողմից ստացված որևէ մեկնաբանություններով, ներառյալ՝ Հոդված 7.5-ի համաձայն վերջնական ԱՀ-ի հաստատման և հրապարակման նպատակներով:

7.4.6. Գնահատող Հանձնաժողովը պետք է իրականացնի և փաստաթղթավորի նախամրցութային հանդիպումների արդյունքները ՊՄԳ Օրենքի, ՊՄԳ Ընթացակարգի և Գնահատող Հանձնաժողովի աշխատակարգի կիրառելի պայմանների և հանգամանքների համաձայն: Բաց նիստի արձանագրությունը չպետք է ստորագրվի նիստին մասնակցող Լիազորված Անձանց կողմից:

Գնահատող Հանձնաժողովը նախամրցութային նիստի տեղեկատվության և փաստաթղթերի որոշ մասերը, ներառյալ՝ նիստի հնչեցված հարցերի համախմբված պատասխանները և Առաջարկի Հրավերի նախագծի և Համաձայնագրի նախագծի թարմացված տարբերակները պետք է փոխանցի յուրաքանչյուր որակավորված Թեկնածուին Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում սահմանված ձևով նիստի անցկացումից հետո (այս դեպքում նիստում բարձրացված հարցերին բոլոր պատասխանները պետք է լինեն ապանձնավորված, այսինքն՝ չպետք է հնարավորություն տան որակավորված Թեկնածուի մասին որևէ տեղեկատվության նույնականացման համար):

7.5. Առաջարկի Հրավերի հաստատումը և հրապարակումը

7.5.1. Գնահատող Հանձնաժողովը պետք է որոշում կայացնի Առաջարկի Հրավերը հաստատելու վերաբերյալ փակ նիստում ոչ ուշ քան հիսուն հինգերորդ (55-րդ) աշխատանքային օրը՝ Հոդված 7.3.1-ի շրջանակներում կայացած՝ Գնահատող Հանձնաժողովի նախապատրաստական նիստից հետո: Գնահատող Հանձնաժողովը պետք է ծանուցի որակավորված Թեկնածուների Իրավասու Անձանց Առաջարկի Հրավերի հաստատման մասին Հոդված 5.1.1-ի (a)-(b) դրույթներում սահմանված ձևով:

7.5.2. Գնահատող Հանձնաժողովը պետք է հրապարակի Առաջարկի Հրավերը Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում Հոդված 7.5.1-ի համաձայն ԱՀ-ի հաստատումից հետո երկու (2) աշխատանքային օրերի ընթացքում: ԱՀ-ի հրապարակումը հավաստում է Ծրագրի Ընտրության Ընթացակարգի Առաջարկի Հրավերի պաշտոնական փուլի մասին:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Ընտրության Ընթացակարգի՝ անվավեր (չկայացած լինելը) հայտարարումը և Ընտրության Ընթացակարգի Չեղարկումը

8.1.1. Գնահատող Հանձնաժողովը պետք է Ընտրության Ընթացակարգը ճանաչի անվավեր (չկայացած) ՈՀ-ի փուլում ՊՄԳ Օրենքում ամրագրված դեպքերում: Տարընկալումներից խուսափելու նպատակով Գնահատող Հանձնաժողովը պետք է իրավասություն ունենա Ընտրության Ընթացակարգը ՈՀ-ի փուլում ճանաչել անվավեր (չկայացած) հետևյալ հանգամանքներում՝

- (a) Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետին Գնահատող Հանձնաժողովին ոչ մի Որակավորման Հայտ չի ներկայացվել կամ բոլոր Գնահատող Հանձնաժողովին ներկայացված Որակավորման Հայտերը չեղարկվել են ՈՀ-ի համաձայն՝
- (b) Գնահատող Հանձնաժողովին ներկայացված Որակավորման Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում սույն ՈՀ-ի պահանջներին (այսինքն՝ Գնահատող Հանձնաժողովին ներկայացված բոլոր Որակավորման Հայտերը մերժվել են սույ ՈՀ-ի համաձայն):

8.1.2. Հատուկ դեպքում, երբ մինչև երեք (3) Թեկնածուներ են ներկայացրել իրենց Որակավորման Հայտերը մինչև Որակավորման Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը և/կամ իրենց Որակավորման Հայտերի գնահատման հիման վրա որակավորվել են երկուսից (2) պակաս Թեկնածուներ սույն ՈՀ-ի համաձայն, Գնահատող Հանձնաժողովը կարող է իր հայեցողությամբ կայացնել հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

- (a) Որոշում Ծրագրի ընտրության ընթացակարգի հայտարարության վերահրապարակման մասին, որի դեպքում Ծրագրի ընթացիկ Ընտրության Ընթացակարգը պետք է չեղարկվի (ինչպես նշվում է Հոդված 8.1.4-ում) և հետագայում վերագործարկվի Կիրառելի Օրենքի համաձայն, կամ
- (b) Որոշում Ընտրության Ընթացակար անվավեր (չկայացած) հայտարարելու մասին:

8.1.3. Գնահատող Հանձնաժողովը պետք է փաստաթղթավորի իր որոշումները, որոնք կայացվում են սույն Հոդված 8.1-ի ներքո իր արձանագրություններում՝ համաձայն ՊՄԳ Ընթացակարգի (ներառյալ՝ ըստ ՊՄԳ Ընթացակարգի 136-138 պարագրաֆների պահանջների):

8.1.4. Ընտրության Ընթացակարգի յուրաքանչյուր փուլում Իրավասու Մարմինը կարող է, իր նախաձեռնությամբ կամ Գնահատող Հանձնաժողովի առաջարկության հիման վրա չեղարկել (հետագա վերագործարկմամբ կամ առանց դրա) Ընտրության Ընթացակարգը Կիրառելի Օրենքի հիմքով: Սույն Հոդված 8.1.4-ի ներքո կայացված որոշումը պետք է հրապարակվի Իրավասու Մարմնի և Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում նման որոշման կայացման օրվանից հետո ոչ ուշ, քան առաջին աշխատանքային օրը:

8.1.5. Սույն Հոդված 8.1-ի ներքո Գնահատող Հանձնաժողովի կամ Իրավասու Մարմնի կողմից կայացված ոչ մի որոշում չպետք է առաջացնի որևէ Հայտատուի որևէ փոխհատուցման կամ հատուցման իրավունք կամ հայց:

8.2. Ծախսեր

- 8.2.1. Թեկնածուն պետք է կրի Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ՝ առանց սահմանափակումների, սույն ՈՀ-ի համաձայն Որակավորման Հյատի հետ կապված հարցերի կամ հարցումների պատասխանների պատրաստման հետ կապված բոլոր ծախսերը:
- 8.2.2. Երբ Գնահատող Հանձնաժողովի համար առաջանում է որևէ ծախս սույն ՈՀ-ի համաձայն Թեկնածուին չբացված Որակավորման Հայտերի վերադարձման հետ կապված, նման ծախսերը պետք է կրի համապատասխան Թեկնածուն:
- 8.2.3. Սույն ՈՀ-ի և Կիրառելի Օրենքի համաձայն Որակավորման Հայտի մերժումը, Ընտրության Ընթացակարգի ցանկացած փուլում Հայտատուի կողմից Ընտրության Ընթացակարգին մասնակցության կամավոր չեղարկումը, Ընտրության Ընթացակարգի անվավեր (չկայացած) հայտարարումը կամ չեղարկումը չեն կարող հիմք լինել Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար:

8.3. Որակավորման Հարցման մեջ փոփոխություններ

- 8.3.1. Գնահատող Հանձնաժողովը կարող է նյութական կամ ոչ նյութական փոփոխություններ իրականացնել Որակավորման Հարցման մեջ Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ընթացքում՝ Իրավասու Մարմնի կողմից նման փոփոխությունների նախապես հաստատման հիման վրա:

Որակավորման Հարցման մեջ փոփոխությունները չպետք է հակասեն ՊՄԳ Ծրագրի նախագծին և պետք է հետևեն թափանցիկության, հավասարության և խտրականության բացառման սկզբունքներին:

- 8.3.2. Որակավորման Հարցման մեջ նյութական փոփոխություններ են նրանք, որոնք նշանակալիորեն ազդում են ՈՀ-ի բնույթի, շրջանակի և պահանջների վրա կամ ՈՀ փուլում Ընտրության Ընթացակարգի իրագործման վրա, մասնավորապես՝
- (a) Հավելված 4-ում (*Հայտարարների Ընդհանուր Պահանջներ*) սահմանված՝ Հայտատուների նկատմամբ ընդհանուր պահանջների և/կամ Հավելված 5-ում (*Որակավորման Չափանիշներ*) սահմանված Որակավորման Չափորոշիչների վրա նշանակալիորեն ազդող փոփոխությունները²
 - (b) ՈՀ-ում ամրագրված՝ Թեկնածուների համար մասնակցության հիմնական պահանջների վրա նշանակալիորեն ազդող փոփոխությունները²
 - (c) ՈՀ-ում ամրագրված՝ Որակավորման Հրավերների նկատմամբ ներկայացվող պահանջների վրա նշանակալիորեն ազդող փոփոխությունները²
 - (d) ՈՀ-ի այլ կարևոր պահանջների վրա, որոնք Իրավասու Մարմնի կողմից սահմանված են որպես նյութական փոփոխություններ, նշանակալիորեն ազդող փոփոխությունները:

8.3.3. Գնահատող Հանձնաժողովը կարող է ՈՀ-ում փոփոխություններ կատարել և հրապարակել՝ առանց Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետները երկարաձգելու՝

- (a) Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն նախորդող՝ ոչ ուշ քան (15) օր՝ ոչ նյութական փոփոխությունների համար, կամ
- (b) Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն նախորդող՝ ոչ ուշ քան (30) օր՝ նյութական փոփոխությունների համար:

8.3.4. Այն դեպքում, երբ ՈՀ-ում փոփոխությունները կատարվել և հրապարակվել են Հոդված 8.3.3-ում (համապատասխանաբար ոչ նյութական և նյութական փոփոխությունների համար) հաստատված ժամանակացույցից հետո (ավելի ուշ), Գնահատող Հանձնաժողովը պետք է՝

- (a) երկարաձգի Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետն այնպես, որ տրամադրի առնվազն տասնհինգ (15) օր Որակավորման Հայտերի ներկայացման համար՝ ՈՀ-ի ոչ նյութական փոփոխությունների հրապարակման օրվանից սկսած, կամ

(b) երկարաձգի Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետն այնպես, որ տրամադրի առնվազն երեսուն (30) օր Որակավորման Հայտերի ներկայացման համար՝ ՈՀ-ի ոչ նյութական փոփոխությունների հրապարակման օրվանից սկսած:

8.3.5. Գնահատող Հանձնաժողովը պետք է հրապարակի ՈՀ-ի փոփոխությունները Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում Իրավասու Մարմնի կողմից ՈՀ-ում փոփոխությունները հաստատելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: ՈՀ-ում փոփոխությունների հրապարակումը պետք է ներառի՝ (i) ՈՀ-ի նոր (թարմացված) տարբերակը համարժեք փոփոխություններով և (ii) ՈՀ-ի փոփոխությունների ամփոփագիրն առանձին փաստաթղթով:

8.3.6. Իրավասու Մարմինը պետք է ունենա բացարձակ ազատություն Գնահատող Հանձնաժողովի կողմից ՈՀ-ում առաջարկվող փոփոխությունների ընդունման կամ մերժման համար, ինչպես նաև՝ սահմանելու՝ արդյոք այդ փոփոխությունները նյութական են, թե՛ ոչ նյութական՝ համաձայն սույն ՈՀ-ի: Իրավասու Մարմինն այնուհետև իրավունք է վերապահվում՝ չեղարկելու Ընտրության Ընացակարգը (հետագա վերսկսմամբ կամ առանց դրա) Կիրառելի Օրենքի համաձայն Գնահատող Հանձնաժողովի կողմից ՈՀ-ում առաջարկվող փոփոխությունների դիտարկման/ուսումնասիրության հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հետևյալ տվյալները պետք է լրացնեն Որակավորման Հարցման դրույթները:

Ծրագրի անունը	Կենսաչափական անձնագրերի և ազգային նույնականացման քարտի թողարկման ծառայությունների ծրագիր
Պատասխանատու մարմնի կոնտակտային տվյալ	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1, 0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն Վեբ կայք՝ https://www.gov.am
Գնահատող հանձնաժողովի կոնտակտային տվյալ	[Լրացման ենթակա]
Որակավորման հրավերում ներառվելու աշխատանքային ժամանակացույց	[Լրացման ենթակա]
Որակավորման Հրավերի հետ կապված հաղորդակցության նպատակներում իրավասու պաշտոնյաներ	[Լրացման ենթակա]
Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում Ծրագրի հանրային հասանելի տեղեկատվության հղումը	[Հղումը կլրացվի]
Որակավորման Հրավերի լեզուն և հաղորդակցության լեզուն	Հայերեն, անգլերեն կամ ռուսերեն
AMEPS-ին հղում	[Հղումը կլրացվի]
Որակավորման Հրավերների պատճենների քանակը	Թղթային Որակավորման Հայտերի դեպքում՝ Մեկ (1) տպագիր բնօրինակ Մեկ (1) տպագիր պատճեն Երկու (2) էլեկտրոնային պատճեն (USB միջոցով) ARMEPS-ի համար նախատեսված Որակավորման Հայտերի դեպքում՝ Մեկ (1) էլեկտրոնային բնօրինակ ARMEPS-ի համար Մեկ (1) էլեկտրոնային պատճեն գաղտագրված էլեկտրոնային փոստով
Որակավորման հրավերների բացման նիստի օրը, ժամը և վայրը	[Հստակեցման ենթակա]
Ծրագրի իրականացման Կառավարության որոշում	[Լրացման ենթակա]

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գործողություն	Նպատակային ամսաթիվ
Ընտրության Ընթացակարգի Հայտարարություն	Էկոնոմիկայի Նախարարության պաշտոնական կայքում Հայտարարության հրապարակման օր (Հայտարարության Ամսաթիվ)
Որակավորման Հրավերների մասին պարզաբանումների պահանջներ	Հայտարարության հրապարակման օրվանից մինչև Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետը
Ներկայացված Որակավորման Հրավերների մասին պարզաբանումների պահանջների վերաբերյալ պատասխանների հաղորդակցում	Յուրաքանչյուր պահանջի ստացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ավել քան 20-րդ աշխատանքային օրը
Որակավորման Հայտերի վերաբերյալ բաց նիստեր	Առաջին նիստ: Հայտարարության Ամսաթիվ + 10 աշխատանքային օր Երկրորդ նիստ (Կողմնորոշիչ, ոչ պարտադիր): Հայտարարության Ամսաթիվ + 20 աշխատանքային օր Յանկացած հետագա նիստեր (Կողմնորոշիչ, ոչ պարտադիր): Հայտարարության Ամսաթիվ + Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետի ավարտին նախորդող 5 օրվանից ոչ ուշ
Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	Հայտարարության Ամսաթիվ + 70 օր
Որակավորման Հայտերի Բացում	Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետ + հաջորդ աշխատանքային օր (Բացման Ամսաթիվ)
Որակավորման Հայտերի գնահատման վերջնաժամկետ	Բացման Ամսաթիվ + 30 օր
Որակավորման Ցանկի հրապարակում	Որակավորման Հայտերի գնահատման վերջնաժամկետ + 5 աշխատանքային օր (Որակավորման Ցանկի Ամսաթիվ)
Գաղտնիության Նախաձեռնության ներկայացում Որակավորված Թեկնածուների կողմից	Որակավորման Ցանկի Ամսաթիվ + 7 աշխատանքային օր
Գնահատող Հանձնաժողովի ԱՀ-ի փուլի նախապատրաստական նիստ	Որակավորման Ցանկի Ամսաթիվ + 10 աշխատանքային օր (Նախապատրաստական Հանդիպման Ամսաթիվ)
Նախամրցութային բաց նիստեր	Առաջին նիստ: Նախապատրաստական Նիստի Ամսաթիվ + 12 աշխատանքային օր Հետագա նիստեր: ըստ կողմնորոշիչ ոչ պարտադիր ժամանակացույցի՝ տրամադրված բոլոր որակավորված Թեկնածուներին առանձին
ԱՀ-ի հաստատում	Նախապատրաստական Նիստի Ամսաթիվ + 55 աշխատանքային օր (ԱՀ-ի Հաստատման Ամսաթիվ)
Ահ-ի հրապարակում	ԱՀ-ի Հաստատման Ամսաթիվ + 2 աշխատանքային օր

Գնահատված Ժամանակացույցը կողմնորոշիչ է և ներկայացվում է մայն ՈՀ-ի թույլ համար: ԱՀ-ի փուլի գնահատված Ժամանակացույցը կներկայացվի Առաջարկի Հարցման մեջ Որակավորված Թեկնածուների համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ստորև ներկայացված տեղեկատվությունը արտացոլում է Նախագծի հիմնական դրույթները (տարրերը) և պետք է լրացնի Պարզաբանման հարցման բովանդակությունը: Ծրագրի հիմնական դրույթների (տարրերի) նկարագրությունը պատրաստված է նախագծի բիզնես հիմնավորման հիման վրա, որը մշակվել է օրենսդրությանը համապատասխան:

1. Ներածություն

ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ), մտադիր է կնքել ՊՄԳ համաձայնագիր՝ նոր կենսաչափական անձնագրերի (Passports) և էլեկտրոնային նույնականացման քարտերի (ID-քարտեր) տրամադրման վերաբերյալ: ՊՄԳ պայմանագիրը կստորագրվի 11 տարի ժամկետով ՀՀ Ներքին գործերի նախարարության կողմից նշանակված մարմնի (պատվիրատու կազմակերպության) և ընթացակարգի հաղթողի (Մասնավոր գործընկեր/ծառայություններ մատուցող) միջև:

2. ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2.1. Նպատակներ և խնդիրներ

Նախագծի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի թվային փոխակերպմանը՝ նպաստելով երկարաժամկետ հանրային-մասնավոր գործընկերության հաստատմանը՝ կենսաչափական անձնագրերի և ID քարտերի թողարկման և տարածման համար: Հիմնական նպատակները կենտրոնացած են հետևյալ ուղղությունների վրա.

1. Քաղաքացիների հարմարավետության և սպասարկման որակի համար սահմանել համաշխարհային նոր չափանիշներ՝ կրճատելով սպասելու, ճանապարհորդական փաստաթղթերի և նույնականացման քարտերի ժամանակը, ինչպես նաև միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան սահմանել նոր ստանդարտներ սպասարկման կայաններում՝ հաճախորդների սպասարկման և օբյեկտների ֆիզիկական վիճակի բարելավման համար:
2. Բարձրացնել անվտանգ և միջազգային չափանիշներին համապատասխան ճամփորդական փաստաթղթերի և նույնականացման քարտերի ներդրումն ու օգտագործումը, որոնք կնպաստեն Հայաստանում թվային հասարակության զարգացմանը, այդ թվում՝ առաջադեմ էլեկտրոնային ծառայությունների, ինչպես նաև ավտոմատացման այլ հնարավորությունների առավել լայն կիրառմանը (օրինակ՝ քվեարկության համար ինքնության ստուգում, սահմանների ավտոմատացված հատում և այլն):
3. Փոխարինել հնացած SS ենթակառուցվածքը՝ բարելավելու գործընթացների անվտանգությունը, արդյունավետությունը և գործառնական ռիսկերի կառավարումը, որոնք կապված են հնացած լուծումների հետ, ինչպես նաև որդեգրել նորարարական լուծումներ՝ շարունակաբար համապատասխանեցնելով այն արդյունաբերության լավագույն չափանիշներին:

2.2. Ծրագրի շրջանակը և նախատեսված գործառնական մոդելը

Ընթացակարգի օբյեկտը կառավարվող համապարփակ ծառայություններ են՝ քաղաքացիներին պաշտպանված նույնականացման քարտերով և ճանապարհորդական փաստաթղթերով ապահովելու համար: ՊՄԳ պայմանագիրը կստորագրվի 11 տարի ժամկետով ՀՀ Ներքին գործերի նախարարության կողմից նշանակված մարմնի (պատվիրատու կազմակերպության) և ընթացակարգի հաղթողի (ծառայություններ մատուցողի) միջև:

Պայմանագրի շրջանակը ներառում է անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված առնվազն հետևյալ ծառայությունները²

1. Ֆիզիկական ենթակառուցվածքների նախագծում, ներդրում, շահագործում և տեխնիկական սպասարկում
2. Նույնականացման և փաստաթղթերի կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգի մշակում, իրականացում և շահագործում, ներառած բոլոր սարքավորումները, ծրագրակազմը, որոնք անհրաժեշտ են քաղաքացիներին ճանապարհորդական

փաստաթղթեր և նույնականացման քարտեր տրամադրելու համար՝ սկսած ընդունելության գրանցումից մինչև փաստաթղթերը քաղաքացուն հասցնելը:

3. Գրանցման գործառնությունների մշակում և իրականացում (առջևի գրասենյակի (front office) հաճախորդների սպասարկման համալիր գործողություններ նախնական գրանցումից մինչև քաղաքացուն փաստաթղթերի տրամադրում (առաքում), ներառյալ բոլոր անհրաժեշտ ռեսուրսները և օժանդակ գործընթացները):
4. Անհատականացման գործողությունների նախագծում և հանձնում (անհատականացման հարցումից մինչև քաղաքացուն փաստաթղթերի հանձնումը, սպասարկումը, ներառյալ՝ բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, որոնք օժանդակում են գործընթացներին):
5. Ճամփորդական փաստաթղթերի և նույնականացման քարտերի ձևաթղթերի նախագծում, արտադրության և մատակարարման (լրգիստիկայի) գործառնությունների իրականացում:

3. ԲԻԶՆԵՍ ՄՈՂԵԼ

3.1. Կազմակերպչական կառուցվածքը

Ընտրության ընթացակարգը և նախագիծը կկազմակերպվեն ՊՄԳ-ի հիման վրա, ՊՄԳ օրենքի պահանջներին համապատասխան, մասնավոր գործընկերոջ և պետական գործընկերոջ մասնակցությամբ: Ծրագրի իրականացման ժամանակահատվածում կսահմանվեն հետևյալ դերերն ու պարտականությունները:

- **Ծառայություններ մատուցող** (մասնավոր գործընկեր) - ընտրվում է ՊՄԳ օրենքում սահմանված ընթացակարգի կազմակերպման միջոցով
- **Պատվիրատու կազմակերպություն** (պետական գործընկեր) – ՀՀ Ներքին գործերի նախարարություն (ՆԳՆ)
- **Շահառուներ**- ՆԳՆ և ԱԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: ԱԳՆ-ի պարտականություններն են օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսություններին և դեսպանություններին ծառայությունների մատուցումը և օտարերկրյա առաքելությունների վերահսկումը
- **Հավաստագրման մարմին** – սահմանվելու է ՀՀ Կառավարության կողմից
- Ծրագրի վերահսկման համար կստեղծվի ՀՀ կառավարության պայմանագրերի մշտադիտարկման հանձնաժողով

3.2. Ծառայությունների ակնարկ

Ակնկալվում է, որ նախագծի իրականացման ժամանակ ոչ կենսաչափական ճամփորդական փաստաթղթերը և նույնականացման քարտերը կփոխարինվեն պաշտպանված կենսաչափական փաստաթղթերով: Բացի այդ, նախատեսվում է շուկա դուրս բերել երեք նոր տեսակի փաստաթղթեր՝ ծառայողական անձնագիր, ոչ ռեզիդենտի անձը հաստատող փաստաթուղթ և օտարերկրյա քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ:

Ակնկալվում է, որ մասնավոր գործընկերը ՀՀ քաղաքացիներին և օտարերկրացիներին, եթե կիրառելի է, կտրամադրի ծառայությունների հետևյալ տեսակները¹ (համապատասխան փաստաթղթերի տեսակները և փաստաթղթերի վավերականության ժամկետները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ Ա-ում):

Աղյուսակ Ա. Ծառայությունների տեսակները և պահանջարկի հաշվարկները

N	Ծառայությունների տեսակը	Փաստաթղթի տեսակը ¹	Փաստաթղթի վավերականությունը, տարիները	Նախատեսված քանակական (10-նամյա գործառնական փուլ)
I. Անձնագրեր				
1.	ՀՀ քաղաքացու կենսաչափական	ID3	10	2 222 220

¹ Համաձայն ISO/CEI 7810 ստանդարտի:

N	Ծառայությունների տեսակը	Փաստաթղթի տեսակը ¹	Փաստաթղթի վավերականությունը, տարիները	Նախատեսված քանակական (10-նամյա գործառնական փուլ)
	անձնագիր (կանոնավոր)			
2.	ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիր (դիվանագիտական)	ID3	5	5 560
3.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու ծառայողական անձնագիրը	ID3	5	11 110
4.	Փախստականի կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի ճամփորդական փաստաթուղթ	ID3	10	11 110
5.	Քաղաքացիություն չունեցող անձանց մասին 1954 թվականի կոնվենցիայի ճամփորդական փաստաթուղթ	ID3	5	11 110
Ընդհանուր (անձնագրեր)				2 261 110
II.	ID քարտեր			
6.	ՀՀ քաղաքացու էլեկտրոնային նույնականացման քարտ	ID1	5	4 744 450
